

Ի. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍՓՈՒՈՔԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՄ

(1994-1996 թթ. հրապարակումների համառոտ տեսություն)

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1915 թ. Հայոց ցեղասպանության ծանր հետևանքներից մեկը ժամանակակից հայկական սփյուռքի կազմավորումն էր. երբ կոստորածներից հրաշքով փրկված Լադիյուր-հազարավոր հայ փախստականներ զաղթի դաժան ճանապարհներով սփռվեցին աշխարհի բազմաթիվ երկրներում:

Թեև սփյուռքահայությունը կարողացավ ձերբազատվել ջարդերից ու զաղթից առաջացած հոգեկան ցնցումից, և բազում զրկանքների հաղթահարման գնով ապրեց ու զոյաուկեց, սակայն կորստի դառնությունը և հրեշավոր անարդարության զգացումը չանհեռացավ: Ետեղեռնյան ամբողջ ժամանակաշրջանում, անկախ պատճառներից, զաղափարախոսություններից ու տարբեր մեկնաբանություններից, սփյուռքահայությունը իր ամբողջության մեջ այն համոզմունքն է ունեցել, որ հայկական ցեղասպանությունը պատմության անպատիժ մնացած այն ոճիրն է, որ ծանրացած է մարդկության խղճին և պետք է պաշտոնապես ճանաչվի ու դատապարտվի: Այսօր սփյուռքը, և նրա մասնուր, հայոց անկախ պետականության ամփայտության պայմաններում, ավելի ինքնավստահորեն է դնում իր արդար իրավունքների վերականգնման խնդիրը, որի նոր վառ վկայությունը հայերի ցեղասպանության 80-ամյակի նշումն էր աշխարհի բոլոր հայկական համայնքներում: Եղևոնի տարեկիցի նշումը ոչ միայն հարգանքի տուրք էր ցեղասպանության անմեղ գոհերի հիշատակին, այլ նաև սուրբ մեկ անգամ ևս մերկացնելու Օսմանյան Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը և նրա ակունքները, վերաբժարվելու հայոց պահանջատիրությունը, նոր թափի հաղորդելու սփյուռքում հայապահպանության մարտումներին:

Հայոց ցեղասպանության 80-ամյակին վերաբերող նյութերը սփյուռքի թերթերում և պարբերականներում փաստաթղթեր սկսել են լուսարանվել դեռ 1994 թ. վերջին ամիսներից: Դեկտեմբերյան համարներում երապարակվել է Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան, Հայ Հեղափոխական Դաշնակցության և Ռամկավար Ազատական կուսակցությունների կենտրոնական մարմինների համաանդ հայտարարությունը հայկական ցեղասպանության 80-ամյակի առթիվ:

«Ի հեճուկս այն իրողության, - ասված է հայտարարության մեջ, - որ միջազգային համայնքը ցեղասպանությունը կնկատե մարդկության դեմ գործված ոճիր... այսօր, դարուս Ա ցեղասպանությունն ութ տասնամյակներ ետք, ոճիրը դեռ կմնա անպատիժ ու անհատույց...: Մեկ կողմն թուրքի ուրացումները, իսկ մյուս կողմն մեծ տերությանց բռնած շահադիտական հաճոյակատար ընթացքը թուրք պետության նկատմամբ, տասնամյակներ ամբողջ պատճառ հանդիսացան, որ Հայկական Դատը մնա անլուծ... Այսուհանդերձ, որքան էլ երկար տևե մեկուն միջազգային կարծիքը մոլորեցնող, իսկ մյուսներում ալ ոճիրին հանդեպ լուծյուն պահող դավը, այսօր՝ եղեմնի ութսունամյակին առթիվ, բովանդակ հայությունը, վերականգնած ազգային ազսա ու անկախ պետականության սահմաններեն ներս, թե Սփյուռքի մեջ կուգա միաեամուռ ծսռացումով հայտարարել միջազգային կարծիքին, որ Հայկական Դատը անժամանցելի է... Կոչ կուղղենք, որ առնետրեք, համայն հայությամբ՝ եկեղեցական իշխանություններով, կուսակցություններով ու միություններով գործենք ցեղասպանության 80-ամյակի միասնական ոգեկանչումներով, ավելի պինդ և ուժական համագործակցությամբ, ամեն բանն վեր գերադասելով համազգայինը, գոտեպնդված մեր ազգային նորագույն նվաճումներով և այն հստատա համոզումով, որ Հայուն դատը արդար է, իսկ արդար դատ մը, ուշ կամ կանուխ կհաղթանակն անպայման»: (Զաղվածքները առնված են

արգենտինահայ «Արմենիա» թերթի 1994 թ. դեկտեմբերի 14-ի համարից):

Բեյրութի «Չարթունըր» 1995 թ. հունվարի 5-ի համարում տպագրել է Ապրիլյան եղեռնի 80-ամյակի առթիվ Միասնական կոչ: «Մենք՝ հոգևոր պետերս, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, հայ կաթողիկե եկեղեցվո և Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիներու միության, որոշեցինք միասնաբար և եղբայրաբար ուղղել ձեզի՝ հայ ժողովրդի մեր բոլոր զավակներուն անխտիր մեր միական խոսքը:

...Հայ ժողովրդի իրավունքներու դատը կմնա մեր բոլորի նվիրական պարտականությունը: Այս նախանձախնդրությունն մղված 80-ամյակի առիթով.

ա) կոչ կընենք քրիստոնեական մեր հավատակից եկեղեցիներում, աշխարհի պետություններում, Միացյալ Ազգերի կազմակերպության, միջպետական, միջազգային բոլոր հաստատություններում, մարդկային իրավունքներու ճանաչման ծառայող բոլոր կազմակերպություններում... որ զորավիզ կանգնին հայ ժողովրդին և կատարեն իրենց պարտքը, որպեսզի ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչվի և արդարությունը իր տեղը գտնե մեր ժողովրդի իրավունքներու ճանաչումով և հարգումով:

բ) ...մեր բոլոր ընկիթները պետք է զսպանակվին համահայկական ոգիի և տոբողության զաղափարով ու չավանդենք, որպեսզի անոնց միջև զգացվի միությունը հայ ժողովրդին, հայրենի պետությամբ և արտերկրի հայությամբ անբակտելորեն շաղախված իրարու, և միության մեջն ձեռք բերվի հարկ եղած գործությունը մեր իրավունքներու արդար լուսնանջին»:

Կոչը ստորագրել են՝ Գարեգին Բ. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Հովհ. Պետրոս ԺԸ Գասպարյան՝ կաթ. Պատրիարք կաթողիկե հայոց և վիք. Հովհ. Գարճյան՝ Եախազահ Մերձսփյոռ Արևելքի հայ ավետարանական եկեղեցիներու միության (24 դեկտ. 1994 թ. Պեյրութ - Լիբանան)

Մամուլի բազմաթիվ հրապարակումներում ընդգծվում է, որ հայ ժողովուրդը պետք է շարունակի պայքարը, որպեսզի միջազգային մակարդակով պաշտոնապես ճանաչվի ու դատապարտվի հայերի ցեղասպանությունը:

«Չարքունք» թերթը (1 ապրիլի, 1995 թ.) գրում է.
«Լրեժխնդրություն չէ, որ կուզենք, այլ արդարություն
կայահանջենք... հանցավորը պիտի ճանաչի իր հանցանքը և ներում
խնդրի...»:

Ամերիկահայ «Մասիս» թերթը 1995 թ. ապրիլի 22-ի
խմբագրականում կոչ է անում շարունակել պայքարը մինչև
արդարության հաղթանակը, որի գրավականը պետք է լինի՝ «Մեկ
ազգ, մեկ հայություն, մեկ դատ» կարգախոսը:

Ընդարձակ են մամուլի հատկապես ապրիլյան օրերին
վերաբերող տեղեկատվությունները: Լանդամասն հաղորդումներ են
տրվում այն մասին, որ սփյուռքի բոլոր հայկական եկեղեցիներում
պատարագ է մատուցվել ցեղասպանության զոհերի հիշատակին:
Տասնյակ հազարավոր հայեր լուրջամբ անցել են եղեռնին
նվիրված հուշակոթողների մոտավ, մասնակցել քայլարշավներին և
հանրահավաքներին:

Տեղեկություններ են հաղորդվում բոլորքի այն ցույցերի
մասին, որոնք տեղի են ունեցել թրքական դեսպանությունների ու
հյուպատոսությունների առջև: Ոգեկոչումի արարողությունները
ստեղծ են ունեցել ինչպես համազաղութային մակարդակով, այնպես
էլ առանձին հայկական հաստատություններում, մշակութային ու
կրթական օջախներում: Կարդացվել են դասախոսություններ,
ցուցադրվել են կինոժապավեններ, կազմակերպվել ցուցահանդես-
ներ ու այլ կարգի միջոցառումներ:

Իրանի «Ալիք» թերթը տեղեկացնում է (31.05.95), որ
ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող է
բարձրացվել Մարկասանի մեջ Տեր Ջորի Մատուռի տարածքում:

Նոր հուշարձան է դրվել Մաև Լուս Անգելեսի թաղամասերից
մեկում՝ Մանթա-Անոյում: Վերանորոգվել է Սողոմոն Թեկերյանի
հուշարձանը ու սգո արարողություն է տեղի ունեցել Ֆրեզնոյի
«Մասիս» հայկական գերեզմանատանը:

1995 թ. ապրիլի 22-ին Մոնրեալի Ռիչլանդ գրասրահում տեղի
է ունեցել ցեղասպանության նահատակների հուշարձանի
հիմնաքարի տեղադրման արարողությունը:

«Հորիզոնը» (Կանադա) (12.05.95) հաղորդում է, որ ապրիլի
24-ին Եռասաղեմում, հայ կաթողիկե եկեղեցում (նահատակների

հիշատակին մատուցված պատարագից հետո, հավաքված բազմությունը շարժվել է դեպի Իսրայելի վարչապետարան և հայ համայնքի սնունդից ներկայացրել հետևյալ պահանջները.

ա) Իսրայելը պետք է ընդունի և դատապարտի հայերի ցեղասպանությունը,

բ) երկրի կրթական հաստատություններում վերացնել հայկական ցեղասպանությանը վերաբերող նյութերի դասավանդման արգելքը:

Եզիպտոսի «Արև» թերթը հիշեցնում է, որ դեռ 1994 թ. ապրիլին Երուսաղեմի հեռուստատեսությունը արգելել էր հայկական կոտորածների վաստագրական ժապավենի ցուցադրումը:

Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ իշխանություններին դիմումներ են հղվել և այլ երկրների հայկական համայնքների կողմից:

Թերթերում մանրամասն տեղեկություններ են հաղորդվում եղեռնի տարելիցի առթիվ Լոս Անջելեսում, Երևանում և Մոսկվայում անցկացված միջազգային գիտաժողովների մասին, որտեղ զեկուցումներով հանդես են եկել հայ և օտարազգի զիտնականները:

Հաղորդումներ կան այն մասին, որ պրեմի. Ռ. Հովհաննիսյանը 1995 թ. հուլիսին ցեղասպանության վերաբերյալ հայերեն և փնգլերեն դասախոսություններ է կարդացել Բեյրութում և Կիպրոսում, որոնց ներկա են եղել Լիբանանի նախկին վարչապետը և խորհրդարանի մի խումբ պատգամավորներ:

«Գանձասար», «Արև», «Նոր օր» (25.03.95), «Ազգային մշակույթ» և «Աշխարհ» թերթերը տպագրել են Սիրիայի հայ ավետարանական համայնքի ծանուցումն այն մասին, որ եղեռնի տարելիցի առթիվ լույս է տեսել բժիշկ, հրապարակախոս Ռաբիրտ Մեսիսյանի «Բռնազաղթի հայ կարավաններու երթուղիները Մյուխի տարածքին՝ 1915-ին», պատկերազարդ գիրք-սպլունդ:

Լիբանանի «Ազգային մշակույթ» գնահատելով հրատարակության փաստագրական արժեքը, ընդգծել է, որ «հայերս չենք կարողացած ձեռք անցնել Մեծ պետություններու արխիվներուն մեջ պահված փաստաթղթերը, որոնք մեր ունեցածներն շատ ավելի շոշափելի ապացույցներ կ'արտունակեն»: Այս քերականի պատճառը այն է, որ «հավաքաբար չենք կարողացած

գորակույի ենթարկել մեր մասվոր և նյութական կարելիությունները»:
Նշվում է, որ ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերը
պետությունների շահամուլ քաղաքականության զոհ կարող են
դառնալ:

«Հառաջը» (25.04.95) հաղորդում է, որ Հակոբ Լիլիկյանը
«Հայկական ցեղասպանությունը բաղադրական դիվանագիտական
փաստաթղթերում» հեղվածում տեղեկացնում է, որ բուլղարական
պետական արխիվներին ծանոթացման ժամանակ հայտնաբերվել
են փաստաթղթեր. որոնք նոր լույս են սփռում Հայկական
ցեղասպանության հետ կապված մի քանի հարցերի վրա:

«Չարթունքը» (29.07.95) տեղեկացնում է, որ հայերեն լույս է
տեսել «Բրիտանիա և Հայկական հարցը» խորագրով (հեղինակ
Ազադի Նասիբյան) գիրքը, որը մինչ այդ երկու անգամ
հրապարակվել է անգլերեն:

«Արև»-ը (26.06.95) հաղորդում է, որ ԱՄՆ-ում
հրապարակվել է Լիպարիտ Ազադյանի «Հայ որբերը Մեծ եղևունի»
խորագրով աշխատությունը: Գերմանիայում լույս է տեսել
Թ. Հոֆմանի «Հայերը և Հայաստանը. հայրենիք և աքսոր»
ուսումնասիրությունը, որը վերաբերում է հայերի ցեղասպանության
հետևանքներին:

Սփյուռքի մամուլի էջերում լայն տեղ են զբաղեցնում
Հայաստանում 80-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառում-
ներին վերաբերող նյութերը: Գրեթե բոլոր թերթերը տպագրել են
Երևանում ապրիլի 21-23-ը տեղի ունեցած հայոց
ցեղասպանությանը նվիրված գիտաժողովում Հանրապետության
նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը, ՀՀ Գերագույն խորհրդի
հայտարարությունը, Գարեգին Առաջինի «Հայրապետական
պատգամը ապրիլյան եղեմի առթիվ»: Հաղորդումներ են
տպագրվել հայրենի կառավարության որոշմամբ Հայոց
ցեղասպանության քանգարանի ստեղծման մասին:

Փարիզի «Աշխարհը» (03.07.95) հաղորդում է տպագրել
քանգարանի բացման արարողության մասին, տրված է քանգա-
րանի սրահների համառոտ նկարագրությունը: Մանրամասն
տեղեկություններ են տրվում տարբեր երկրների Հայաստանի
Հանրապետության դեսպանատներում և հյուպատոսություններում

եղեռնի հիշատակի օրվան նվիրված ընդունելությունների մասին: Նշվել է, օրինակ, որ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանության ընդունելությանը մասնակցել են մոտ քսան սենատորներ և կոնգրեսմեններ, վարչակազմի ներկայացուցիչներ, հայ զաղթականներին օթևան տվող 11 երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ: Հանդիսությունում հրապարակվել է Հայաստանի մախազահի հրամանագիրը եղեռնից վերապրած սփյուռքահայերին հանրապետության քաղաքացիության հատուկ կարգավիճակ տալու մասին:

Սփյուռքահայ մամուլը հանգամանորեն է անդրադարձել ցեղասպանության 80-ամյակի օտար շրջանակների արձագանքներին:

Զուղարական ազգային հեռուստատեսության «Եթեր-2» ծրագիրը 1995 թ. ապրիլի 14-ին ցուցադրել է «Զուղարիսյի երկնքի տակ» խորագրով վավերագրական ֆիլմը, որը երկրի լայն հասարակությանը մոտիկից ծանոթացնում է բուլղարահայ համայնքի դարավոր պատմությանը և հայերի դեմ գործադրած ցեղասպանության մանրամասներին: Հաղորդումը կազմել է Ա. Պիցինան, գրուցակից ունենալով «Երևան» թերթի խմբագիր Կ. Հայրապետյանին («Աշխարհ», Փարիզ, 18.03.95):

Փարիզում լույս տեսնող «Կամք» թերթը տեղեկացնում է, որ ֆրանսիական հեռուստատեսությունը ընդարձակ հաղորդումներ է տվել հայերի ցեղասպանության, հայ ժողովրդի անցյալի ու ներկայի մասին: Հաղորդման բաղկացուցիչ մասը կազմել են Լևոն Տեր-Պետրոսյանի, Շառլ Ազնավուրի, պետական, մշակութային այլ գործիչների ելույթները: Ցուցադրվել են վավերագրական ժապավեններ և Հ. Մալյանի «Նահապետ» կինոնկարը:

«Հառաջ» թերթը (Ֆրանսիա, 17.05.95) հայտնում է, որ 1995 թ. մայիսի 14-ին Անգլիայի երեսփոխանական ժողովում ոգևորվել է հայկական ցեղասպանության 80-ամյակը: Գլխավոր րանախոսը՝ սյոռֆեսոք Վահագն Տատրյանը, «անգլերենի հմուտ տիրապետմամբ ու նյութի խոր իմացությամբ ու մաքուր ցմամբ արժանացել է ունկնդիրների զմահատանքին»:

Արգենտինահայ «Արմենիա» թերթը (03.05.95) տեղեկացնում է, որ 1995 թ. ապրիլի 25-ին Ռիբուզայի խորհրդարանը մեկ

անգամ ևս արծարծեց հայերի ցեղասպանության հարցը: Խորհրդարանի երեսվորաններ Կանիել Փինթոսը, Խալսե Տրուլան, Կառլոս Պիտան, Գաբրիել Բարանտիրան խրնգ ելույթներում բնոգծել են, որ բուրքական կառավարությունը ծրագրել ու իրականացրել է հայերի խալառ բնաջնջումը, որը մաաժվաժ ցեղասպանություն է եղել: Խորհրդարանը դատասպարտել է թուրք կառավարությանը և պահանջել, որ վերջինս ճանաչի ցեղասպանության իրողությունը: Որոշում է ընդունվել խորհրդարանի նիստի արձանագրությունը փոխանցել արտաքին գործոց նախարարություն, որպեսզի անհրաժեշտ քայլեր արվեն հայոց ցեղասպանության հուրցը միջազգային աալաններում բարձրագնելու համար:

«Ասպարեզը» (ԱՄՆ) ապրիլի 27-ի համարում տեղեկացրել է, որ Բուղարիան նույնպես ճանաչել է հայերի ցեղասպանությունը: Թերթը հաղորդել է նաև, որ Կանադայի խառնդարանը բննարկել է ցեղասպանության բանավեժը, բայց հարցը բվեարկության չի դրվել:

Հունաստանի «Ալատ օր»-ը հաղորդում է (30.03.95), որ ԱՄՆ-ի հանրապետական մաավորականները ուշադրության են ներկայացրել մի օրինագիժ, ոյով ճանաչվում է հայոց ցեղասպանությունը և պահանջ է ներկայացվում Թուրքիային՝ «Ընդունել և հիշատակել Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թթ հայերի դեմ գորժաժ ոճրագործությունը»: Օրինագժի եղիմակները հայաարարել են. «Մենք երբեք չպետք է մոռանանք հայ ժողովրդի աննկարագրելի տառապանքը և պարտավոր ենք թույլ չտալ որև, մեկին ծաժկել այն»: Եեշտվել է, որ «ներկայացվաժ օրինագժի ընդունումը ցույց կտա, որ մենք դեմ ենք ազգայնուկաա ատելությանը և կանենք մեզնից կախվաժ ամեն ինչ, որպեսզի երբևր այսև չկրկնվի ցեղասպանությունը այս աշխարհում»:

«Չարթոքը» վկայակոչելով ամերիկահայ թերթերի հրապարակումները, հունվարի 14-ի համարում սուլագրել է «Հայկական ցեղասպանության օրինագիժը նոր ձևավակերպումով կմոտենա կոնգրեսի օրակարգին» հողվաժը: Այն վերաբերում է սենատոր Ռոբերտ Դոուլի կոնգրեսին ներկայացվող նախագժին, ըստ որի պահանջվում է Հայաստանին վերադարձնել Թուրքիայի

Արևելյան նահանգները Տրապիզոնից Վան տարածքով:
Նախագիծը բովանդակում է հետևյալ հիմնական հարցադրումները.

ա) հայկական ցեղասպանության պնդումները պարտադրել
Թուրքիային՝ իբրև բացարձակ իրողություն,

բ) երբ Թուրքիան ընդունի այդ պնդումը, նրան պարտադրել
ներողություն խնդրելու,

գ) եթե Թուրքիան ընդունի զայն և ներողություն խնդրե, այս
անգամ ալ գործված ցեղասպանության փոխարեն զայն
պարտադրել «հատուցում վճարելու»,

դ) այս բոլորին վերջ Արևելյան Անատոլիա հողերուն վրա
«հայկական հողային կարգ մը պահանջներ» բերել օրակարգի
վրա»:

ԱՄՆ-ի հայկական քերթերի հրապարակումների
համաձայն, 1995 թ. մայիսի 2-ին, Վաշինգտոնում հայերի
ցեղասպանությանը նվիրված արարողությանը հանդես եկած
հանրապետական և դեմոկրատական կուսակցությունների
ներկայացուցիչ ծերակուտականները արտահայտել են այն
կարծիքը, որ ԱՄՆ-ը ամբողջությամբ պետք է դադարեցնի
Թուրքիային տրվող օժանդակությունները, քանի դեռ շարունակվում
է Հայաստանի շրջավալումը:

Լիբանանի «Կանչ» հանդեսի բացառիկ (ապրիլյան)
համարում տպագրված են մի քանի արաբ պատմաբանների և
քուդարական գործիչների, ճանաչված մտավորականների
հրապարակումները, նվիրված հայկական ցեղասպանության
80-ամյակին:

«Եթե մենք տարիներ անցած են ցեղասպանության
թվականներն,- գրում է արաբ ակադեմիկոս հրապարակախոս Ֆարուք
Տահրուժը,- իսկ հայ ժողովուրդը դարձած է ավելի խրթխտ...
Լիակայն այնուհետ կբլի, որ Թուրանականներու թոռները տակավին
չեն լքում անոնց պատմության իմաստությունը: Տակավին անոնց մոտ
կգոյատևեն սուրի ու մարակի հետամնաց մտայնությունը...»:

«Հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանության
80-ամյակին նշումը մեր կոչ մըն է դեմոկրատական ուժերու
գոյությունի համար», - գրում է Լիբանանի նախկին վարչապետ

Ուշիւ Մունը իր «Հայոց դեմ գործված ցեղասպանությունը՝ դալուս մեծագույն ոճիրը» հոդվածում:

«Առավել ցավալին հոն է, որ աշխարհը կոռուսնա սյդ սպանդը,- գրում է Լիբանանի պառլամենտի երեսվոյսան Պշարա Մըրհենթը: Եթէ հայ ժողովուրդը ուղղակիորեն հարվածվեցուվ և մարդկային վիթխարի կորուստներու ենթարկվեցավ, ապա մարդկային քաղաքակրթությունը իր կարգին մեծ հարված ստացավ, որովհետև գործված ոճիրը համագոր է դաշունահարելու մարդկային իրավունքները»:

«Անհրաժեշտ է այս (հայ) ժողովրդին վերադարձնել իր իրավունքները»,- գրում է Քարիմ Մրուհեն և ավելացնում. «Հայ ժողովրդին չեմ ցեղասպանությունը ... մախաքայր հաղիսացուվ հետագա ցեղասպանություններու... Հակառակ անոր, որ ուրսուն տարիներ անցած են, թուրանական հին ծրագիրը կշարունակվի վերանորոգվել և նոր ձևեր ու անուններ ստանալ նոր պայմաններու ներքև՝ պահելով հանդերձ իբ հին մպատակն ու ոգին...»:

«Կամք» օրաթերթը ապրիլի 24-ի համարում տպագրել է Հայ Դատի հանձնախմբի կազմակերպած վիճարկումի հավաքի հետ առնչված հարցերի քննարկման մանրամասն տեղեկատվությունը: Հավաքը տեղի է ունեցել Ֆրանսիայի մախագահական ընտրությունների մախօրեին: Հավաքին ներկա են եղել մախագահության երեք թեկնածուների երաշխավորած անձիք, որոնք համաձայնություն են տվել այն մախագծին, որը պախանջել է Ֆրանսիայի կառավարությունից հայոց ցեղասպանության ճանաչումը:

«Չարթոնքի» 1995 թ. մայիսի 13-ի համարում գետուված է հարցագրույց Ֆրանսիացի պատմաբան Իվ Թերնունի հետ, որի կարծիքով «Հայոց ցեղասպանությունը կվերաբերի ամբողջ մարդկության, որովհետև ոճիր մըն է գործված ամբողջ մարդկության դեմ»:

Թերթը (5 մայիսի, 95 թ.) հաղորդում է, որ ապրիլի 23-ին ցեղասպանության հիշատակի հավաքին իր ելույթում Լոս Անջելուսի քաղաքապետ Ռիչարդ Ռիուրդնին հայտարարել է. «Հայոց ցեղասպանության իրողությունը պասմական փուսու է և իզուր են այն ուրանալու փորձերը»:

Սվյատոքին գրեթե բոլոր թերթերը գոհունակությամբ են արձագանքել 1995 թ. ապրիլի 14-ի Ռուսաստանի Դումայի հայտարարությանը՝ Հայոց ցեղասպանության դատապարտման մասին, այն համարելով նոր փուլ հայերի ցեղասպանության ճանաչման գործընթացում:

«Ջարթոնքը» գրում է (20.04.95).

«Նորագույն ժամանակաշրջանի նոր շրջադարձերը քաղաքական իմաստով ավելի լավ պայմաններ են ստեղծել հոգաւտ հայկական դատի հայանպաստ լուծման: Դրա ցայտուն օրինակն է Ռուսաստանի դաշնության պետական Դումայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչման միաձայն ընդունված որոշումը»:

«Ասպարեզ» օրաթերթը (ԱՄՆ) իր ապրիլի 27-ի համարում անդրադարձել է թուրք դեսպանի բողոքին՝ ռուսական Դումայի որոշման դեմ: Ռուս պաշտոնյա Վ. Խտրատովը պատասխանել է. «Ռուսիա օրենսդիր և գործադիր մարմինները իրենց որոշումները կատարման ենթակետով Ռուսիո շահերեն և այս հարցին մեջ միջամտությունները տեղին չեն»:

«Մասիս» շաբաթաթերթը (ԱՄՆ) (6 մայիսի, 95 թ.) նշում է, որ «հիմնականին մեջ 80-ամյակի գլխավոր հաջողությունը կարելի է նկատել Ռուսաստանի Դումայի պաշտոնական ճանաչումը, որուն իրականացման պատիվը կերթա մեր կառավարության տարած քաղաքական իրապաշտ աշխատանքներում»:

Այս հարցադրումների լույսի տակ, որոշ թերթեր դժգոհում են ԱՄՆ-ի նախագահ Բիլ Կլինտոնի 80-ամյակի առթիվ արված հայտարարությունից, գտնելով, որ նա երկդիմի է անդրադարձել ցեղասպանության փաստին՝ չհիշատակելով «ցեղասպանություն» բառը:

Չիշեցնելով նախագահի խոստումը նախընտրական սլոյարի օրերին, երբ նա հիշատակել ու ընդունել է ցեղասպանության իսկությունը, «Մասիսը» (06.05.95), դիմելով ԱՄՆ-ի նախագահին, գրել է. «Մենք կսպասենք, որ պետական բաժանմունքը և կոնգրեսի գույզ թևերը Չեր առաջնորդությամբ անմիջական անհրաժեշտ քայլերը կառնեն ճանչնալու հայկական ցեղասպանությունը և ճշտելու անցյալի սխալը»:

Այս խնդրին վերաբերող եզրակացություններում միանշանակ արագ է քաշվում Ռուսաստանի օրինակով Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից հայկական ցեղասպանության պաշտոնական ճանաչման ոլախանջը:

«ԱՄՆ-ի նման մեծ դեմոկրատիայի մեծ լքվելը մը պետք է առաջնորդե միջազգային համայնքը համաշխարհային ճանաչում ապահովելու և դասապարտելու Հայոց ցեղասպանությանը, վեր մնալով քաղաքական նվազ հանգամանքներից» («Ձարթոնք», 5 մայիսի, 95 թ.):

Թերթերը և պարբերականները լայնորեն են անդրադարձել քրքական մամուլի առձագանքներին՝ ցեղասպանության հիմնարկին առթիվ:

«Հայրենիք» (ԱՄՆ) շաբաթաթերթը (06.04.95 թ.) տպագրել է Գևորգ Տանապետյանի հեղվածը՝ ուղղված թուրքական հեռուստատեսության՝ հայեռի ցեղասպանությանը նվիրված հաղորդմանը, ապացուցելով, որ այդ հաղորդումը այլ բան չէ, քան պատմական փաստերի նենգափոխում: Հեղինակը քաղվածաբար վկայակոչել է հաղորդման մտայնությունն արտահայտող պարբերությունը՝ «Օսմանյան պետությունը, երբ 1914-ին հարկադրված պատերազմի մեջ մտավ և կռվում էր յոթ ճակատների վրա, հայերը սկսեցին վայրագություններ գործադրել ճակատների ետին տարածքներում: Օսմանցիները ինն-առաս ամիս հանդուրժեցին այս կացությունը, բայց ասպարդյուն մնացին: Դրանից հետո կառավարությունը որոշեց միջոցներ ձեռնարկել... պատերազմական պատճառներով տեղահանության ենթարկել այն տարրերին, որոնք կասկածելի էին թվում լուսնության կամ դավադրության մեջ»: Հեղվածի հեղինակը հանրահայտ փաստերի վկայությամբ հերքում է թուրքական հեռուստատեսային հաղորդման կեղծիքը:

«Մարմարա» (Թուրքիա) թերթը ըմբռնելի պատճառներով զսպված լուսնություն է պահպանել ամիսներ շարունակ հայոց ցեղասպանության մասին: Ապրիլի 24-ի համարում թերթը տեղեկացնում է, որ թուրքական «Ձաման» թերթը հրապարակում է հեղվածաշար՝ «Հայերը 24 ապրիլի 1915-ին» խորագրով: Հեղինակն է «Մուլեյման Դեմիրել» համալսարանի պրոֆեսոր Բայրամ

Գործանք: Թուրք պատմաբանը վտրծում է ամեն կերպ ժխտել ցեղասպանության փաստը: Պաամական կարճակ տեղեկություններից հետո մա եզրակացնում է, որ Հայաստան և հայ պետություն ամհասարակ գոյություն չի ունեցել, եղել են ցաք ու ցրիվ հայ մարդիկ:

«Հայերը իրենց գոյությամբ կպարտին օսմանյան իշխանության», - գրում է եեղինակը: Հողվածագիրը անդրադարձել է Հայկական հարցի ստեղծման պատճառներին, նշելով, որ մինչև 19-րդ դարը ման հարց չի եղել և որ այդ հարցը ստեղծել են Արևմուտքի պետությունները՝ նպատակ ունենալով «թուրքերը և օսմանցիները վտարել Պալբաններեն և օսմանյան տիրապետությունեն փրկել քրիստոնյա ժողովուրդներին»: Հայ-թուրքական հարաբերությունների վատթարացման երկրորդ պատճառը հողվածագիրը համարում է հայերի ըմբոստացումները, որոնց նպատակն է եղել ստեղծել իրենց պետությունը:

Այս մտյն միտքը ավելի թանձր ընդգծված է «Միլլեթ» թերթում տպագրված «Հայաստան և Թուրքիա» հոդվածում (թարգմանությունը տես «Մարմարայի» ապրիլի 26-ի համարում):

«Մարմարայի» վկայությամբ անդրադառնալով ԱՄՆ-ի նախագահ Զինտոնի հայտարարությանը ապրիլի 24-ի առթիվ, թուրքական թերթերը գրել են՝ «Զինթոն ցեղասպանություն բառը չգործածեց: Այս մեկը թուրք դիվանագիտության հաղթանակն է»: Թերթը տեղեկացնում է, որ «Ըղադրի մեջ բացվեցավ 24 ապրիլին նվիրված գիտածողով, որին հրավիրված էին և հայ գիտնականներ, որակազի բացահայտվի սխառմական ճշմարտությունը, թե «ով ում ջսկրսւծ է», բայց հայ պատմաբանները չեն բարեհաճել ներկայանալ: Գիտածողովում ելույթ է ունեցել մաև Ստամբուլում Ալեքսեջանի հյուպատոս Աբաս Հաջալօղլուն՝ հայտարարելով, թե «Արմանց (հայերի) աջակիցը ուուն է»: Նա իր երախտագիտությունն է հայանել թուրք կառավարությանը այն բանի համար, որ «Թուրքիա միշտ օգնած է ազերիներուն»: Մեկ այլ մասնակից՝ պրոֆեսոր Էրոլ Օրալը իր խոսքում ասել է. «Արևմտյան երկրները միշտ մանեղական-թուրք ժողովուրդներու դեմ գործած են: Մեր միաբնակամարտուն ու միությունը միշա սարսափեցուցած են զանուր»:

Թերթի ապրիլի 28-ի համարը տպագրել է «Զաման» թերթի աշխատակից Իլիսան Պարտակչիի հոդվածը «Լեց ժամ հայոց ցեղասպանության զիտաժողովի մեջ», որը սեղի է ունեցել Գեորգիանիայի Քիել համալսարանում: Հեղինակը ինքնաբերական ոճով հայտնում է, որ ինքը և իր համախոհները «ամբողջովին ջրեցին հայկական տեսակետները, և հրամցուցին անհերքելի փաստեր հայոց դեմ»:

«Մարմարայի» ապրիլի 27-ի համարում տպագրված է վերոհիշյալ Գեորգիանի հաղորդաշարի վերջին դրվագը՝ «80 տարի առաջ և այսօր՝ նպատակները նույնը կմնան Թուրքիոթ թշնամիներում» խորագրով: Հեղինակը գրում է. «Թուրքերն ու հայերը դարձրել շարունակ եղբայրաբար կողք-կողքի, թիկունք-թիկունքի ապրեցան և աշխատեցան առանց որևէ տարակարծություն ունենալու իրար հետ: Իսկ ինչ որ պատահած է պարբերաբար, արհեստականորեն ստեղծված է նպատակավոր կերպով: Եվ այս վեճերը զրգռողներն ալ եղած են մեծ՝ պետությունների զլխավորությամբ՝ Անգլիո, Ռուսաստան, Ֆրանսիա և ամերիկացի միսիոներները: Պատահած բոլոր դեպքերում պատասխանատուները անունք են»:

Մայիսի 26-ի համարում թերթը անդրադարձել է նույն «Զաման» թերթի աշխատակցի մի այլ՝ «Այս նամակը վաղը այս հայուն դրկեցեք» վերտառությամբ հոդվածին: Նամակն արհամարանքով ուղղված է ֆրանսահայ իրավաբան Պ. Տեռնյանի դեմ, որն իր ելույթներում մերկացրել է Բեռնար Լևիսի ծախվածությունը թուրքերին:

«Մարմարա» թերթը (27.05.95) տպագրել է ««Զանալ 7» կայանի երեկոյան հաղորդումը հայկական և հրեական հարցերու շուրջ» տեղեկատվությունը, ուր դարձյալ ջանք է քափված ժխտելու ցեղասպանության փաստը:

«Զարթոնքը» (14.04.95) անդրադարձել է Թիվ-Ալիվում լույս տեսնող «Ճեռուզակն վոստ» օրաթերթի 1995 թ. փետրվարի 22-ի համարում հրապարակված օսմանյան պատմության մասնագետ Էիցաք Զերենիի հոդվածին, որը ժխտում է հայերի ցեղասպանությունը և՝ «փաստորեն կանարգե հայ ժողովուրդն ու պատմությունը եղեմի 80-ամյակի նախօրեակին»:

«Առաջին անգամը չէ, որ հրեաները կ'իտրոնեն ուրանալ Հայոց ցեղասպանության իրողությունը, աշխարհի աչքին ներկայացնելով միմիայն հրեական ռոջակիզումը որպես ցեղասպանության մոդել, հետևաբար պետք է մտնեցնել, անշքացնել «մրցակից» այլ ցեղասպանությունները և առաջին հերթին հայկական եղեմը»: Այնուհետև հեղինակը մեջբերումներ է կատարում Քերեմի հոդվածից՝ ցույց տալով վերջինիս նենգափոխումներն ու դիտավորությունները: Պատահական չէ, որ «Արև» օրաթերթը (Եգիպտոս) իր 1995 թ. հունիսի 10-ի համարում վկայակոչում է սիրիացի պատմաբան Նայիմ Ալ-Էաֆի այն աշխատությունը, որտեղ ասված է. «Թրքական ռճրագործության մեջ մեծ դեր ունեցան սիռնիստները: Նրանք թիկունք կանգնեցին Օսմանյան Թուրքիային, արտոնություն ստանալու համար Պաղեստինի մեջ հրեական գաղութ կազմելու...»:

Թերթի 1995 թ. ապրիլի 23-ի համարում տպագրված է «Հայկական ցեղասպանությունը մեկ անգամ ևս դատապարտության նյութ» ընդարձակ հոդվածը: Նրա մի դրվագը վերաբերում է «Պեկլե» հրատարակչության տնօրինուհի Այշե Ջարակուլուի դատավարությանը: Տնօրինուհին մեղադրվել է Իվ Թերնոնի «Հայկական ցեղասպանությունը» (1977, Փարիզ) գիրքը թուրքերեն թարգմանելու համար: Գրքի առաջաբանը գրել է թարգմանչուհու ամուսինը՝ Ռակլա Ջարակուլուն: Թուրքական դատարանը ամուսիններին դատապարտել է դրամական տուգանքի և արգելել գրքի վաճառքն ու տարածումը: Ի դեպ՝ տնօրինուհին մինչ այդ ենթարկվել է հինգամսյա բանտարկության մեկ այլ թուրք մտավորական Իսմայիլ Պեշիկճիի համագործակցությամբ «քրդական հարցի» վերաբերյալ գիրք հրատարակելու համար:

«Ջարթմըրը» (08.06.95) տպագրել է «Օսմանեն մինչև Զիլբերի օրերը...» բուրդ գրող Ալան Օսմանի պատմական ակնարկը: «Թուրք ունեցավ այն զգացումը, թե իր տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդներում՝ բյուրտ, հայ, ասորի, հույն և այլն իրավունքները ընդունվող համագործ է թրքական եսի մերժումին և թուրք ժողովրդի ոչնչացման... Այս պատճառով ալ թուրքերը միշտ աշխատած են մյուս ազգությունները հալեցնել ու ձուլել թուրք ազգության մեջ», - գրում է հեղինակը: Հունիսի 10-ի համարում

A-III
85125

ծանուցում կա Իվ Թերնոնի «Հայերի ցեղասպանությունը» գրքի թուրքերեն թարգմանության ու ապագայության հետ սամշված հետապնդումների մասին՝ «Հայկական քապում» վերնագրով։ Հեղինակն է Ռակոփ Չարաօղլուն։ Նա, հիշեցնելով Գերմանիայի վայրապետ Բրանդի ծնրալրումը Աուշվիցի ճամբարում հրեա նահատակների հիշատակի առջև, գրում է. «Այսօր անիրականալի երազ կթվա մտածել, որ թրքական վարչապետ մը ծնրադրել կրնա հայերի ցեղասպանության հաշարձանի մը առջև»։

Թուրք պատմաբանների և լրագրողների կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քարոզչությունը մերկացնելու համար Լիբանանի «Լանչ» հանդեսը եղեռնին նվիրված բացառիկ համարի խմբագրականում գրում է. «Այսօր մեր կարևորագույն գործը պիտի ըլլա... պրպտել միջազգային բոլոր հաստատություններում մեջ՝ գտնելու համար տակավին երևան չհանված և մեր տեսակետներում ուժ տվող փաստաթղթերը»։ Այնուհետև խնդիր է դնում զանել դաշնակից պետություններ, որոնք կպաշտպանեն մեր արդար իրավունքները։ «Այս ուղղությամբ անշուշտ առաջնաեղբորությունը կերթա Ռուսաստանին, որուն հետ ամենասերտ կապերը ճակատագրական են մեզի համար».-գրում է թերթը։

Այնուհետև ասվում է, որ թեև առ այսօր ցեղասպանության իրողությունը համաշխարհային հանրությանը հասցնելու նպատակով քիչ բան չի արվել, բայց «ղոթախտաբար այդ գործը կատարելով կարգ մը կազմակերպություններու հիմնական նպատակը եղած է ավելի սեփական բրբբազանդը, քան թե հասարակաց դատին օգտակար հանդիսանալու հեռանկարը»։ Ապա խմբագրականը հուշում է. «Օտար շրջաններում մոտ կատարվելիք տեղեկատվության աշխատանքներում մեջ պետք է զգուշանալ ծայրահեղ և ազգայնամոլ կարգախոսներն... Մինք հայերս բոլոր թուրքերում նույն աչքով չենք նայիր բնավ, թեև մենք կդատապարտենք, և կատենք թուրք այն ղեկավարները, որոնք հրահերցին և կազմակերպեցին հայերու ջարդերը, անոնց, որոնք խավարամտության մեջ պահեցին թուրք ամբոխը, զանոնք մոլեռանդորեն մղելու համար հակահայ ահաբեկչական արարքներու»։ Մի քանի այլ թերթերի հրապարակումներում նույնպես առաջարկվում է ստեղծել Հայ Դատին նեցուկ

պետությունների ազդեցիկ մի համախումբ, շարունակել հրապարակումները օտար լեզուներով Հայ Դատի ծրար ստեղծելու համար:

«Մասիս» թերթը (29-ր հուլիսի, 1995 թ.) տպագրել է Վահագն Տատրյանի դասախոսությունը, որը պարունակում է նոր հայտնություններ հայոց ցեղասպանության մասին՝ քաղված գերմանական և քուրքական արխիվներից: Ցեղասպանության կառուցվածքը ռացիալիստիկ հինգ կետերի վրա է ծանրացել հեղինակը.

ա) կանխամտածում,

բ) ցեղասպանական մտադրություն,

գ) քողածածք և մոլորեցուցիչ մեթոդների կիրառում՝ ներառյալ հայերին զրգռելու պատրվակ ստեղծելու միտում,

դ) ցեղասպանության կազմակերպում և իրագործում,

ե) իթքիհաղ կուսակցության գերադաս մարմնի գլխավոր դերը:

«Դամբը» հաղորդում է (10 ապրիլի 1995 թ.), որ թուրք պատմաբան Թ. Աքչամը Ֆինլանդիայում ռուսերեն լույս է ընծայել «Թուրք ազգային ինքնությունը և Հայկական հարցը» գիրքը, ընդունելով հայերի ցեղասպանության փաստը: Այդ գիրքը մինչ այդ 1992 թ. լույս էր տեսել Թուրքիայում, որի պատճառով հեղինակը վտարվել էր երկրից և Գերմանիայում գրել է երկրորդ գիրքը՝ «Մենք՝ թուրքերս և հայերը» խորագրով:

Թերթի վկայությամբ իրադարձությունների անաչառ գնահատության փորձեր են կատարել Փոթու Օդլուն «Պատմություն Հայաստանի մասին», Թոհսին Ջելալը «Կմեղադրեմ», «Թրքական սևասկետը հայկական հարցի վերաբերյալ» և Արզու Թոքերը «Հարյուր տարվա լուծություն» հրապարակումներում:

«Նուր կյանք» (Ռումինիա) ամսաթերթը (1995 թ. հունվար) անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը նվիրված՝ Լեսլի Դեյվիսի «Մահվան նահանգը» և Վահագն Տատրյանի զրբերին նշում է, որ այնուամենայնիվ ցեղասպանության 80-ամյակի նախօրյակին հարստանում է ցեղասպանության մատենագրությունը, վերլուծական ուսումնասիրություններով ու դիվանատներում պահված ցարդ անծանոթ ու նվազ ծանոթ փաստաթղթերով: Այս կարգի զրբերից է Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի

Դեյվիսի 1915 թ. առաքած հեռագրերը պարունակող հատորը, որը լույս է աեսել Նյու-Յորքում 1989 թ. և 1995 թ.՝ Աննա Թերրիի թարգմանությամբ Բրյուսելում, ֆրանսերեն՝ «Հայկական ցեղասպանության ամուլությամբ ամերիկյան դիվանագիթեր» խորագրով: Առաջաբանը իբրև բաց նամակ հասցեագրված է պատմաբան Բեռնար Լևիին, որը հանդես էր եկել հայկական ցեղասպանության ժխտումով:

«Կանչ»-ում հրապարակված են Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանապետի երկու անտիպ նամակները՝ ուղղված Փարիզի հայոց արքեպիսկոպոս Վոսմապետ Զիպարյանին՝ գրված 1912 և 1915 թվերին:

«Հայրենիք» թերթը գրում է. «Սրանից երեք տասնամյակ առաջ... հայրենաբնակ հայությունը ցեղասպանության հիշատակման համար պայքարեց այն բանի համար, որպեսզի այսօր անկախացած Հայաստանի նախարարը մանկապարտեզի և նախակրթականի ծրագրից հանի եղեմնի հիշատակը...»: Անհիմն համարելով այն փաստարկը, թե իբր ցանկալի չէ մատաղ սերնդի գիտակցությունը ծանրաբեռնել ցավերով ու դժբախտություններով, հողվածագիրը՝ պրոֆ. Գ. Խուռայանը ավելացնում է. «Այդ դեպքում հայոց պատմությունից դուրս պետք է հանել այն ահավոր էջերը, որոնք պատմում են ազատագրական պայքարի ընթացքում մեր կրած պարտությունները, սարսափելի տանջանքները, որոնք հաճախ արյունաբքում էին անում մեզ: Խելացի ուսուցիչը այդ դեպքերը օգտագործում է ոչ թե ատելություն սերմանելու, այլ երիտայի սրտում հայրենասիրության զգացում ներարկելու, աննկուն կամք, հերոսական ոգի... արմատավորելու համար...»:

Դիմելով Ա. Բելյանին՝ հեղինակն ասում է. «Ի՞նչ պատասխան պետք է տալ հայ մանուկին, եթե նա հարցնի, թե ինչու՞ հայության կեսից ավելին հայրենիքից դուրս է: ... Յեղասպանությունը այնպես է կապված մեր ազգային արժեքների, սովորույթների, կենցաղի և արյան հիշողության հետ, որ դուք չպիտի կարողանաք հասնել ձեր նպատակին» («Հայրենիք», 30 մարտի 1995 թ.):

Նույն թերթի մարտի 16-ի համարում կարդում ենք. «... Ինչպես կարելի է լռեցնել Սևակի «Անլռելի զանգակատունը»,

որը համայնավար վարչակարգի ճնշումներով լի ժամանակներում նույնիսկ լռեցնել չհաջողվեց: Հակառակը, պատմագետարվեստական արժեքի համար կրկին շնորհվեց Պետական մրցանակ»:

«Մասիսը» (13.05.95) կրթօջախներում ցեղասպանության դասընթացի արգելումը համարում է «ազգադավ արարք»:

Մի շարք հրապարակումներում վտրձեր են արվում Ա.Բլեյանի մոտեցումը բացատրել Թուրքիայի նկատմամբ Հայաստանի ունեցած դիրքորոշմամբ, կշտամբում են հայրենի իշխանություններին, երկու երկրների հարաբերությունների կարգավորման ճիգերում ավելորդ զիջողականություն ու զգուշավորություն հանդես բերելու համար, ասվում է, թե «առևտուր է զմում մեր ժողերգության վրա», «զոհ է դառնում մեր ազգային ցավը» և այլն:

Այդ անհանգստության առթիվ «Նոր կյանքը» (10.06.95) տպագրել է «Հայաստան. հավասարակշռված քաղաքականություն» հոդվածը, որտեղ ընդգծվում է, որ հանրապետության Թուրքիայի նկատմամբ վարած այսօրվա քաղաքականությունը «գործապաշտ է, հեռանկարային և ոչ զգացական», որ դրական ճնշման մոտեցումներով շատ ավելի մեծ արդյունքի կարելի է հասնել, քան կռիտ քաղաքականություն վարելով:

«Երիտասարդ Հայաստան» ամսաթերթը հրապարակել է Պ. Միմոնյանի «Անկախության հրամայականը» հոդվածը, որտեղ ասված է. «Հակառակ հակաթուրք տրամադրությունների առկայության, - Հայաստանի թե սփյուռքի մեջ, - գարգանալու և ընդհանրաճանաչվելու վրա է այն մտածողությունը, թե դիվանագիտական կամուրջների հաստատումը դրացի թշնամի պետության հետ ամենևին ցեղասպանության ուրացում և մոռացում չէ, այլ՝ ռեալ իրականությունից ելնող մերձեցումի քաղաքականություն... Իրստահ մոտեցումով, ոչ մոտավոր, ոչ հեռավոր ասլազայում, չի կարելի հայկական հողային դատի լուծումը զինյալ ուժով պատկերացնել...»: Հեղինակը վստահություն է հայտնում, որ Հայաստանի անկախության ու շահերի պաշտպանությունը՝ միջպետական հարաբերությունների դիվանագիտական ճանապարհներով, «անտես պիտի չթողու՝ իբրև Հայկական Դատի վախճանակետ... Անոր ամենեն ավելի գիտակ հայրենի

պետականությունը... արտաքին քաղաքականության մարզին ներառնողը և Հայկական Դատի դիվանագիտական հետապնդումը: Արտաքին քաղաքականությունը քաղաքական արվեստին նրբամիտ ռժը կկազմե, որուն տիրացումը և գործադրությունը Հայաստանի անկախության հրամայականներեն է...» («Երիտասարդ Հայաստան», 58 սեպտեմբերի 1994 թ.):

«Նոր օր» թերթը (11.03.95) գրում է. «Հայկական պետությունը իր սեփական դերը պիտի կատարի՝ մեկնելով Հայաստանի այսօրվա և վաղվա շահերից, որը կարող է տարբեր լինել սփյուռքի քաղաքական հոսանքների քաղաքականությունից...

Հայաստանը փափագում է հարգել միջազգային դիվանագիտության չափանիշները և բարի դրացիական հարաբերություններ մշակելու իր անկախ քաղաքականությունը»:

«Ազատ օր»-ի վկայությամբ «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին տված հարցազրույցում Հայաստանի նախագահի ավագ խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը հայտարարել է, որ Անկախություն մոնեցած հանդիպումների ժամանակ ինքը առիթ է ունեցել խոսելու հայերի ցեղասպանության 80-ամյակի ոգեկոչման մասին: Թուրք խոսակցի այն հարցումին, թե դա կարող է բարդություններ առաջացնել, նախագահի գլխավոր խորհրդականը պատասխանել է. «Հայաստանի պետությունը բարոյական պարտք ունի իր ժողովրդի առջև. ցեղասպանության ճանաչումը այլ երկրների և Թուրքիայի կողմից կարևոր խնդիր է, բացառապես բարոյական պարտք է»:

«Զարթոնքը» (3 հունիսի, 95 թ.) հիշեցնում է, որ «ցեղասպանության 80-ամյակի առթիվ հայրենիքում կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ... հազվագյուտ միջոցներով ու սփյուռքի օգնությամբ պետությունը կառուցել է ցեղասպանության թանգարան՝ նույն ցեղասպանությունը չմոռանալու համար... արդյոք միայն որպես ողբերգություն հիշելով պետք է զբաղվեր պետությունը...»:

Թերթը (26 հունիսի 95 թ.) նկատում է, որ Հայաստանի ղեկավարության Թուրքիայի նկատմամբ ոչ կոշտ դիրքի պատճառը ոչ թե այն է, որ «նա մեծ սեր ունի կամ հիացած է Թուրքիայով, այլ

այն, որ տնտեսական տագնապներից ազատվելու համար հարկ է թուրքիայի հետ երկխոսություն հաստատել»:

«Մարմարան» (28.04.95) տպագրել է ցեղասպանության հարցի կապակցությամբ Ժիրայր Լիպարիտյանի ելույթը, որտեղ ասվում է. «Նոսրերը և ճառերը շատ լավ են, բայց այս պետությունը պետք է ապրի որպես ազատ, անկախ պետություն և այս ժողովուրդն ալ պետք է ըլլա անվտանգ: Եվ եթե կարողանանք իրականացնել այս ամենը, ապա առիկա շատ ավելի մեծ հաջողություն կըլլա, քան որևէ խոսք...»:

«ՀԱՅ ԿՅԱՆՔ» (ԱՄՆ), շաբաթաթերթի 1995թ. մայիսի 16-ի, բացառիկ համարը նվիրված է Հայոց մեծ եղեռնի 80-րդ տարելիցին:

«Ինչպե՞ս ծրագրվեցավ մեծ եղեռնը» վերնագրի տակ ամփոփված տեղեկատվություններ են տրվում, որոնք ինչպես ծանուցում է խմբագրությունը՝ «Բուն իսկ թուրքական աղբյուրներն քաղված փաստեր են, որոնք կպարզեն եղեռնագործության բնույթն ու ծավալը»:

Շաբաթաթերթը իր բացառիկ համարում տպագրել է «Հյուսեին քազավորին հրահանգը ի պաշտպանություն տեղահանյալ հայերի» տեղեկատվությունը:

«Արաբերեն բնագրով հրատարակություն կուտանք պատմական արժեքով փաստաթուղթ մը, որուն հեղինակն է Ա. աշխարհամարտի ընթացքին մերձարևելյան երկրներու թազավոր և Մեքքեի մեծավոր հռչակված Շերիֆ Հյուսեին Հորդանանի այժմու թազավորի մեծ հոր՝ Ապտալլայի մեծ հայրը» - ծանուցում է շաբաթաթերթի խմբագրությունը: Շերիֆ Հյուսեին Իբն Ալին ժամանակին տեսնելով օսմանյան կառավարության հրամանով տեղահանված հայության րեկորների ծանր կացությունը, հանձնարարել է իր զավակներին, վերջիններիս միջոցով բոլոր արաբ ցեղախմբերին՝ իրենց պաշտպանության տակ առնել հայերին:

Ըստ արժանվույն գնահատելով Շերիֆ Հյուսեինի մարդասիրական վերաբերմունքը հայերի հանդեպ, շաբաթաթերթը տպագրել է այդ փաստաթղթի արաբերեն բնագիրը և դրա հայերեն քարգմանությունը: Ընդունված կարգի աստվածափառաբանումից

հետո գրված է. «Այս տողերը գրելով մեր փափագն է. որ պաշտպանենք բոլոր անոնք, որոնք ճամփան ետ կմնան և կգանվին ձեր ցեղապետության մեջ՝ Հակոբյան հայ համայնքին: (Հայերը Հակոբյան են կոչվել անկասկած Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքին ենթական լինելու պատճառով): Օգնեք անոց իրենց բոլոր խնդիրներում մեջ և պահպանեք զանոնք, ինչպես որ կպահպանեք ձեր անձերը, ձեր ինչքերը և ձեր զավակները և ամեն դյուքություն ընծայեք անոնց... Ասիկա կարևորագույն խնդիրներն են կն է, որուն գործադրությունը կպահանջենք ձեզմե...»:

Ըստ Հովհաննես քահանա Կեֆերյանի վկայության (տպագրված արաբական մամուլում) Շեքիր Հյուսեին Իբն Ալի թագավորը աստվածահաճո այլ հրահանգներ է իջեցրել. հովանավորել հայ զաղթականներին: Դրանցից մեկում թագավորը հրամայել է արաբների կողմից որդեգրած հայ երեխաներին վերադարձնել իրենց համայնքի գիրկը: Այս և այլ կարգի հովանավորումները վկայում են մարդասիրական այն մեծ վերաբերմունքը, որ ունեցել է Շեքիֆ Հյուսեին թագավորը հայերի հանդեպ:

Թերթի «Մուսթաֆա Քեմալն ալ հաշիվ պահանջած էր» հոդվածում ասվում է, որ 1926 թ. իթթիհադականները, այժմ որպես լեռնապետներ կուսակցություն, մահափորձ կատարեցին Մուսթաֆա Քեմալի դեմ՝ առանց հասնելու իրենց նպատակին: Մահափորձի մասնակիցները դատվեցին և ենթարկվեցին մահապատժի: Սրանց թվում էին և Հայոց սպանդի կազմակերպիչներից երկուսը՝ դոկտոր Նազըմը և առևտրի նախարար Էվիթ բեյը:

Այդ օրերին ահա Մուսթաֆա Քեմալը վրդովմունքով ու գայրությունով է խոսել դավադիրների մասին: «Նախկին երիտասարդ թուրքերու (իթթիհադականներու) այս ավելցուկները, որոնք հաշիվ պետք է տային մեր միլիտանավոր քրիստոնյա հպատակներու զանգվածային և անողոր տարագրությանց ու ջարդերուն համար, ըմբոստացան հանդապետության տիրապետության ներքո: Մինչև այսօր անոնք ապրեցան կողոպուտի, գողության, կաշառակերության միջոցով և անընդունակ դարձան ու չհաշտվեցան իրենց ճակտի քրտինքով պարկեշտորեն ապրելու գաղստիարին հետ...»:

Ուղղակի և ամուղղակի Ջեմալը ընդունում է հայերի ցեղասպանության փաստը: Բայց այդ խոսքերը ասելիս մոռացել է, որ ինքն էլ Թալեաթի, Էնվերի, Նազըմի մամն մի ոճրագործ է, որ ձեռքերը թաթախել է հարյուր հազարավոր հայերի ու հույների արյան մեջ Կիլիկիայում, Իզմիրում, Անատոլիայում և այլուր:

«Թալեաթ և Մուսթաֆա Ջեմալ, պատմության դատաստանով և մանավանդ հայ ժողովրդին համար, այս երկուսը մեծ սարքերություն մը չունին իրարմե: Տարբերությունը ոճիւրները գործած ժամանակին, կիրարկված բնաջնջման եղանակներուն և զոհերու համրանքին մեջ է միայն»-գրում է թերթը:

Շաբաթաթերթում «Ցեղասպանություն» խորագրով հոդվածով հանդես է եկել պրոֆեսոր Գևորգ Խոլոպյանը: Հեղինակը կարեորում է ցեղասպանության մասնագիտական ուսումնասիրության, (որ) տարբեր կողմերի, երեսների ու ծալքիքի: Դուրսհայտման խնդիրը:

Նա քննարկում է ցեղասպանության վերլուծությունից դեպի ցեղասպանագիտության ձևավորման ընթացքը և ներկայացնում ցեղասպանության բազմախտոսական, կրոնագիտական, պատմագիտական, քաղաքագիտական, իրավագիտական, դիվանագիտական ու սոցիալ հոգեբանական ուսումնասիրությունների ասպարեզում մասնագետների արձանագրած նվաճումները:

Գ. Խոլոպյանը գրում է, որ թուրքերի գործած ոճիրը՝ հայերի ցեղասպանությունը ճշմարիտ իրողություն է, ակնհայտ փաստ, որ աշխարհի ժողովուրդները, այդ թվում և իրենք թուրքերը վաղ թե ուշ պարտավոր են այն ընդունել: Ցեղասպանությունը միայն մի ժողովրդի ճակատագրի հետ չի առնչված, այն համայն մարդկությանը հուզող հարց է: Այս գիտակցությունը այսօր դարձել է ողջ մարդկության սեփականությունը, և այս էլ չի կարող իր դրական անդրադարձը չունենալ Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրության վրա:

Թուրքերը բութ համառությամբ ուրացան և դեռ շարունակում են ուրանալ իրենց գործած ոճիրը: Արևմուտքը ռազմաքաղաքական նկատառումներով դարձավ Թուրքիայի դաշնակիցը և չկամեցավ քրքրել Հայկական հարցը: Երբեմնի

խորհրդային Միությունը Հայկական հարցը դիտեց իբրև միջազգային խաղաղությունը խաթարող մեղ ազգայնամոլություն:

Մինչև 1940-ական թվականների կեսերը Հայկական հարցը, ցեղասպանությունը մնացին իբրև եզակի երևույթ՝ անթափանց շղարշով պատած: Երկրորդ աշխարհամարտի ավարտին և հետո աշխարհում պատահած արյունոտ դեպքերը սթափեցրին մեծ տերություններին և նրանք հարկադրված ընդունեցին, որ գոյություն ունի երեշմուղի համաշխարհային մի երևույթ, որը ծավալվելով կարող է հարցականի տակ դնել մարդկային ցեղի գոյությունը և խաղաղությունը:

1944 թ. լեհ գիտնական Ռաֆայել Լեմբինը առաջին անգամ մարդկային բառապաշարում շրջանառության մեջ առավ **ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ** հասկացությունը: 1945-1946 թթ. տեղի ունեցավ Նյուրնբերգյան հայտնի դատավարությունը, որը պատժեց պատերազմի հանցագործներին, հրեաների, սլավոնների, զնչուների ողջակիզման կազմակերպիչներին: 1948-ին ՄԱԿ-ի ընդհանուր ասամբլեան ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին» Կոնվենցիան: Սրան հաջորդեց Ջենովայի Կոնվենցիան (1949): Տարբերակվեցին այդ հանցագործության տեսակները՝ ցեղասպանություն, մշակութասպանություն, լեզվասպանություն, քաղաքասպանություն, գաղափարասպանություն, կրոնասպանություն և այլն:

Այս ամենը նպաստեց ցեղասպանագիտության արագ ձևավորմանը:

1950-1960-ական թվականներին ցեղասպանությունը դիտվեց ոչ միայն «պատմագիտական, այլ նաև քաղաքագիտական ու իրավական հարց: ...Հարաբարյան շարժման վերելքի օրերին հայկական խորհրդարանը ընդունեց ցեղասպանությունը դատապարտող և հայկական պահանջատիրական իրավունքը պաշտպանող պետական անդրանիկ փաստաթուղթը: Այսպիսով, ցեղասպանությունը պաշտոնապես ստացավ դիվանագիտական գունավորում»:

Գ. Խուրայանը այն միտքն է հայտնում, որ «ցեղասպանագիտությունը դանդաղ է առաջընթաց կատարում, որովհետև ցեղասպանության ենթարկված ժողովուրդների

գիտնականները չեն գործում միասնաբար, զբաղված են միայն իրենց ժողովրդի ցեղասպանության հարցերով:

Այսօր նկատելի է հայ գիտնականների համագործակցությունը ոչ միայն Ամերիկայի և Եվրոպայի, այլև արաբ, հույն, բուլղար, հրեա, սլավոն և քուրդ մասնագետների հետ:

Թուրքերն իրենց ոճիրը գործեցին այնպիսի ժամանակ և այնպիսի ձևերով, որ աշխարհի աչքին անտեսանելի մնա: Հրամանները ծածկագրված էին, օտարերկրյա պաշտոնյաների ու դիվանագետների գրությունները զաղտնագրված: Երկար տարիներ դրանք փականքի տակ էին դրված: Հրապարակի վրա էին միայն երեք փաստաթուղթ:

ա) Դաշնակիցների 24-ը մայիս, 1915-ի Հայտարարությունը այն մասին, որ հայերի նկատմամբ գործադրվող ոճրի համար պատասխանատու է Օսմանյան կայսրության կառավարությունը, որը պատժվելու է պատերազմից հետո:

բ) Թուրքերի ուրացման հայտարարությունը:

գ) Մեքքեի Էմիր և Շեքիֆ Հուսեյն Բեն Ալիի երեք հայտարարությունները (1916-1917), որտեղ նա թուրքերի գործադրած հայասպանությունը համարում է իսլամ կրոնին անհարիր ու ամոթաբեր»:

Միջազգային մամուլի էջերում երբեմնի ցեղասպանության փաստը հաստատող նյութերի, հռչակածների հրապարակումը պիտակավորվում էին իբրև մտացածին քաղաքականություններ: Այսպիսի պայմաններում բացառիկ նշանակություն ունեին ականատեսների, ցեղասպանությունից վերապրողների հուշերը, վկայությունները, մանավանդ օտարներինը:

«Մեզ հասած քազմաթիվ նկարագրությունները,- գրում է Խուլայանը,- սաղմնավորեցին կարևոր տեսական դրույթներ և կանխորոշեցին ցեղասպանության ռազմաախրության հետագա ընթացքն ու ուղղվածությունը: Այդ մակարդակում արդեն հնարավոր եղավ նկատել, որ հայերի նկատմամբ տարած քաղաքականության նպատակը հայերի ոչնչացումն էր, որ այն պետականորեն ծրագրված էր»:

Անդրադառնալով ցեղասպանության բարոյախոտականին, Գ. Խուլայանը գրում է. «Փորձառությունը ցույց է տալիս, որ մեր

համախառնները շատ են, երբ հարցը վերաբերում է բարոյական հաստատմանը: Նրանք նվազում են, երբ առաջանում է բարոյական դատապարտման պահանջը: Շատ ավելի սակավաթիվ են մեր բայեկամները, երբ քննարկվում է բարոյական պատժելիության հարցը: Ուստի հայերս ձգտում ենք մտքամոր բարոյա-իրավական կամուրջներ կառուցել մեր և այլ ազգի համապատասխան կազմակերպությունների ու հաստատությունների միջև»:

Հեղինակը գտնում է, որ ցեղասպանությունը դարձել է մահ կրոնագիտական և աստվածաբանական տեսական հարց, որովհետև այն կրոնական խորք ունի մահ գործնականում առումով: «Թուրքերը կանխատեսվածություն հայերի նկատմամբ գործադրվող ցեղասպանությանը տվին կրոնական գունավորում, քեև, ըստ էության, այն հեռու էր այդպիսին լինելուց»-գրում է Գ. Խոլոպյանը: Մահմեդականների և ոչ մահմեդականների կրոնական դավանանքների հակադրությամբ կարողացան բորբոքել, բշտամանք սերմանել թուրք խավարամիտ խուժանի մեջ և այս հանգամանքը օգնեց նրանց իրենց նպատակին հասնելու համար:

«Ցեղասպանությունը հայերիս համար,- գրում է հեղինակը,- քաղաքական խորք ունի, քանի որ այն ունակ է մագնիսի պես իր դաշտում հավաքելու հայ կյանքի կարևորագույն հարցերը: Այն հայ ժողովրդի ապրելի խավերն ու հոսանքները համախմբում է որոշակի ուղղությամբ գործելու համար: Այն հաճախ դառնում է այն չափանիշը, որով հայ ժողովուրդը որոշում է իր տվյալ հարաբերության բնույթը դեպի այլ ժողովուրդները, պետությունները, կոստակցություններն ու կազմակերպությունները: Այն, որպես արդար լուծում պահանջող անադալտ ու անմալոկային մի երևույթ, մի բանակում է հավաքագրում ինչպես իրենց արմատները մոռացած հայերին, այնպես էլ օտարասզի մարդասերներին... Ֆաշիստական Գերմանիան տեղահանելով ու սպանելով եվրոպաբնակ հրեաներին, նրանց փաստորեն հարկադրեց ապաստան որոնել իրենց կորցրած հայրենի տարածքներում և շուտով այնտեղ վերականգնել հրեական պետականությունը: Թուրքերը բռնագաղթի ենթարկելով հայաստանաբնակ հայերին, զանգվածորեն նրանց ջարդելով, իրարից բաժանեցին հայ մարդուն և հայ հողը և աշխատեցին բացառել

հայ հողի վրա հայ պետականության հաստատման հնարավորությունը: Այս պատճառով էլ, ցեղասպանությունը հայերի համար ավելի քաղաքական խորք ունի, քան ողջակիզումը հրեաների համար»:

Հեղինակը խոսում է այն դժվարությունների մասին, որ ընկած են ցեղասպանության նկատմամբ իրավագիտական մոտեցում մշակելու ճանապարհին: Թվում էր թե, եթե համաշխարհային հանրությունը համոզվի, որ թուրքերը գործադրել են բնաջնջման ծրագիր, ապա դրան մեքենայաբար կհետևի ոճրագործի պատժելիությունը: Բայց այդպես չէ: «Նախ անհրաժեշտ է հանցագործության փաստը կապել որոշակի իրավական օրենքի, սկզբունքի, կանոնի ու նախադեպի հետ ու դրանց միջոցով մեկնաբանել այն: Իսկ եթե հանցագործությունը մտնում է Միջազգային Օրենքի իրավասության մեջ, ապա առաջանում է մեծ տեղությունների շահերով թելադրված ուժի, դիվանագիտության հարուցած պատվարների հաղթանախման անհրաժեշտությունը» - գրում է Գ. Խաչատրյանը:

«ԱՄՊԱՐԵԶ» (ԱՄՆ) թերթը 1996 թ. ապրիլի 23-ի համարում տպագրել է Հայկական ցեղասպանության 81-ամյակին նվիրված հավելվածը 40 էջ ծավալով, ուր տեղ են գտել մոտ երկու տասնյակ հեղինակների թղթակցությունները, հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Հավելվածը բացվում է պրոֆեսոր Երվանդ Սարգսյանի «Օսմանյան կայսրության հայերի ֆիզիկական ոչնչացման քաղաքականությունը 19-րդ դարի 90-ական թվականներին» ուսումնասիրությամբ, որը յուրովի անփոփոմն է արդեն հայտնի և բազմիցս հոլովված փաստերի: Հեղինակը անդրադառնալով Օսմանյան պետության 19-րդ դարի վերջերին սանձազերծած ջարդերին՝ հիմնավորում է, որ հայերի կոտորածները համագոր են ցեղասպանությանը:

Հաջորդ շարադրանքը Վ. Բրուտյանի «ՀՀԴ կոսակցության պայքարը Օսմանյան կայսրության դեմ» հոդվածն է, որի առաջին դրվագը վերաբերում է Դաշնակցության և Բ.Դռան բանակցություններին: Անցյալ դարի 90-ական թվականներին կոտորածներից անմիջապես հետո հայերի պայքարը թուրքական

վարակարգի դեմ նոր թափ ստացավ, այն առաջին անգամ, որ Մուլթան Համիդը սահմանված էր հաշվի մտել ստեղծված լեռնաշղթայի հետ: Մուլթանը դիմում է ՀՀԴ կուսակցությանը բունակցությունների հրավերով՝ իբր հայերի վիճակը բարելավելու նպատակով: Սակայն բանակցությունները որևէ արդյունք չունեցան: Մուլթանը դեմ էր հայ կուսակցությունների միավորմանը: 1898-ի ապրիլին ժնկում գտնարված Դաշնակցական բյուրոյի ընդհանուր ժողովում առաջադրվեցին հետևյալ պահանջները՝ Թուրքիայից կոտորածների հետևանքով հեռացած բոլոր հայերի դարձը իրենց պատկանական օջախները և նրանց անվտանգության ապահովումը, նրանցից խլված ունեցվածքի վերադարձումը, հայ քաղաքական բաժանարարների ազատ արձակումը և նոր միայն տեղի ունեցած Խլաթի և Բաղեշի հայության կոտորածների հանցավորների պատժումը ամենայն խստությամբ: Այս պահանջներից և ոչ մեկին Մուլթանը ընթացք չտվեց:

Երկրորդ դրվագը վերաբերում է Օսմանյան ընդդիմադիր տարրերի երկու համաժողովներին, ուր ընդհանուր առմամբ փոխզիջումներով ընդունվեց Մուլթան Համիդին զահեղնկեց անելու վճիռը: Հույները, արաբները, ալբանացիները, հայերը և մյուս ընդդիմադիր ուժերը ոգևորված երիտթուրքերի շոյալ խոստումներով սատար կանգնեցին երիտթուրքերին: Գահեղնկեց արվեց Մուլթան Համիդը, իշխանության գլուխ անցան երիտթուրքերը:

Երրորդ դրվագում հեղինակը անդրադարձել է սահմանադրության հռչակումից հետո Դաշնակցություն-իթքիադ կապերին:

«Հավելվածի» հաջորդ մյուսը էմմա Կոստանդյանի «Հայ հոգևորականության դերը Մասունի 1894 թ. ալստամբոլյան ընթացքին» հոդվածն է:

Մասունի ալստամբոլյան նախապատրաստության, ազգային զարթոնքի, ինքնագիտակցության արթնացման մեջ իրենց պատկառելի ավանդը ներդրեցին հայ հոգևորականները: Հեղինակը այս գործում արժանին է մատուցում նրանց՝ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկից մինչև գյուղական քահանաները, որոնք կյանքի գնով սատարել են սասունցիների ազատագրական

պայքարին, պաշտպանել իրենց տունն ու տեղը, արժանապատվությունը թուրքական հրոսակախմբերից:

Տպագրված Լ. Գևորգ Խոլոպյանի «Հայ ցեղասպանության պատճառները» հոդվածը: Հեղինակը զուգահեռ համեմատականով պարզաբանում է հրեական ողջակիզման և Հայոց ցեղասպանության հիմնական տարբերությունները: Գ. Խոլոպյանը այն միտքն է հայտնում, որ «Հրեական ողջակիզումը գերմանացի ժողովրդի պատմության խորքում աստիճանաբար խմորված ու պատմական փալեր ունեցող երևույթ չէ: Այն Գերմանիայի պատմությամբ բացատրել չի կարելի: Այն կապված է լոկ ֆաշիստականության կարճ տիրապետության հետ: Մինչդեռ, թուրքերի այլամերժ հոգեբանությունը (ջարդել, կոտորել այլազգիներին) հարյուրամյակների պատմություն ունի: Այս է պատճառը, որ հայոց ցեղասպանությունը տարբեր կարծիքների տեղիք և տալիս»:

Նրկարդ հիմնական տարբերությունը, ըստ հեղինակի, այն է, որ հայերի ցեղասպանությունը կատարվեց հայերի պատմական հայրենիքում: «Հետագայում ցեղասպանության ենթարկված շատ ժողովուրդների համար այն լոկ պատմության սև էջ դարձավ, քանի որ բավարարվեց այդ ժողովրդի պահանջաիրության մեծ մասը ու նրա նկատմամբ գործադրված ոճիրը ստացավ իր ճանաչումն ու արժեքավորումը: Հայերի համար այն դեռ ապրող ու արյունոտ վերք է, որն իրեն զգալ է տալիս շատ ասպարեզներում և որի իրականության շուրջ վիճում են շատերը»- գրում է նա:

«Հավելվածը» տպագրել է Վահագն Թովմասյանի «Հայ ժողովրդի ցեղասպանությունը» համառոտ ակնարկը:

Հեղինակը հակիրճ տալիս է Արևմտյան Հայաստանի բնակչության ցեղասպանության նախապատմությունը: Նա գրում է. «Հայերի ոչնչացման ռազմաքաղաքական կանխադրույթն ունի 1400 տարվա պատմություն՝ դրա հեղինակը բյուզանդացի Մավրիկյոս Լյարսն է (582-602 թթ.): Նրան է վերագրվում «Հայաստանը՝ առանց հայերի» արտահայտությունը, որը հետագայում որդեգրեցին Հայաստանը նվաճած բոլոր զավթիչները: ...«Մակայն վերոհիշյալ ռազմավարությունը, հիրավի պեռական մակադղակի բարձրացվեց թուրքական տիրապետության տարիներին»: Թուրքսեպատակ

հայության բնաջնջումը պարբերական բնույթ ստացավ 19-րդ դարում իրար հաջորդող սուլթանների՝ Աբդուլ Մեճիդի, Աբդուլ Ազիզի և հատկապես Սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք։ Հեղինակը նշում է, որ բնականոն աճի պայմաններում հայ ազգաբնակչությունը 100 տարվա ընթացքում կարող է հասնել մոտ 10 միլիոնի, մինչդեռ ոչ միայն չի ավերացել, այլ նվազել է պարբերական կոտորածների, բռնի մահմեդականացման և հարկադրական արտագաղթի հետևանքով։

Թաթուլ Մանասերյանը «Ցեղասպանության կանխարգելումը ժամանակակից պայմաններում» հոդվածում նշում է այն հիմնական միջոցները, որոնք ապահովում են ցեղասպանության կանխարգելումը՝

- ա) քաղաքական համախմբվածություն,
- բ) միջազգային ատյաններում տարբեր ազգերի հետ քաղաքական համագործակցության զարգացում,
- գ) արտագաղթի կասեցում,
- դ) Հայաստանի տնտեսության մեջ արդյունաբերական զարգացած երկրների մասնակցության խթանում,
- ե) հայոց պետականության կայունացում և հզորացում,
- զ) հայկական սփյուռքի հզորացում,
- է) հայ ժողովրդի բնական աճի ապահովում։

Շահան Գանտահարյանի «Ցեղասպանությունը քաղաքականություն է» և Վարդգես Տոլապճյանի «Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք...» հոդվածներում կշտամբանք կա Հայաստանի ներկա իշխանությունների դեմ, որոնք հեղինակների կարծիքով նահանջել են Հայ Դատի պաշտպանության դիրքերից։

«Հայաստանի իշխանավոր վարչախմբի թուրքամետ քաղաքականությունը զեթ ներազգային իմաստով սուղ արժեց հայ քաղաքական մտածողության։ Մասնատվեցավ այլապես Արցախի ազատագրական պայքարով հավելյալ ամբողջականություն ապրած Հայ Դատ հասկացությունը։ Հայաստանի նորահաստատ իշխանությունը չուզեց ստուար իսկ կանգնիլ Հայկական ցեղասպանության միջազգային ճանաչման աշխատանքներում», - կարդում ենք Շահան Գանտահարյանի հոդվածում։

Երկու քաղվածք Վ. Տոլստոյանի հոդվածից. «Որքան աստե՛ն որ Երևանի վարած արտաքին քաղաքականությունը չի կրճար և կամ չի կամենար հաշվի առնել ամբողջական հայության ազգային իդեալներն ու օրակարգը՝ սփյուռքահայությունը պարտի առանձին ստանձնել հայ պահանջատիրության պայքարը՝ այն հաստատ համոզումով, որ հայրենարնակ հայությունը հոգով իր հետ կմնա և երբ մույն ինքն Հայաստանի պետությունը Թուրքիո հետ գործակցության համար ցեղասպանության ճանաչումի հարց չի հարուցաներ, կարելի չէր ակնկալել, որ եվրոպական համայնքը ինքզինք «պապեն ավելի պապական» ցույց տար՝ այդ մույն նախապայմանին վրա պնդելով»...

Հավելվածում տպագրված է նաև Գևորգ Տոնապետյանի «Համաթրքության գաղափարախոսությունը և Հայկական ցեղասպանությունը» հոդվածը:

Պատմական էքսկուրսներից հետո՝ հեղինակը եզրակացնում է. «Թուրքը ուղղելի չէ և սակայն, գիտակցաբար միջազգային ներկա դիվանագիտությունը անտես կառնե պատմական փաստագրական արձանագրություններուն վավերականությունը և կշարունակե իր կրավորական կեցվածքը ցուցաբերել, երբեմն մույնիսկ պատմական տվյալներուն հակառակ ուղեգիծ մը կորդեզրե, պարզապես չվշտացնելու համար «իր հավատարիմ դաշնակիցը»:

Տպագրված են Մուսա լեռան հուշակոթողի կառուցման աշխատանքներին վերաբերող հարցազրույց, ցեղասպանության օրերին հայոց ձեռագրերի ճակատագրի մասին հանգամանալից տեղեկատվություն, Գևորգ Զրիստինյանի «Յեղասպանությունը Պ. Սևակի ստեղծագործության մեջ» գրականագիտական հոդվածը, ինչպես նաև սիրիացի կինոռեժիսորի կողմից «Հողի եղբայրներ» ֆիլմի ստեղծման պատմությանը վերաբերող հարցազրույցը: Ֆիլմը պատմում է թուրքական բռնությունների, կոտորածների մասին, որից զերծ չմնացին և արարները:

«Ասպարեզի» հաջորդ համարներում տպագրված են ցեղասպանության վկայակոչումներին վերաբերող լուրեր և այլ նյութեր՝ «Հունաստանի խորհրդարանը կճանչնա հայկական ցեղասպանությունը» (30.04.96), «Թուրքիո դեսպանատան դեմ

բողոքի ցույցեր, որի ժամանակ ելույթ են ունեցել հայ և ռուս բանախոսներ» (01.05.96). «Պրոֆեսոր Հովհաննիսյանը կրճաթղթեր եղեռնի ուրացման քաղաքականությունը» (03.05.96). «Ցեղասպանությունը ոգեկոչվեցավ ամերիկյան կոնգրեսեն մերս» (04.05.96) հռովածները և լուրեր տարբեր տեղերից ևդեռնի ոգեկոչման ձեռնարկումների մասին:

«Ասպարեզի» 1996 թ. ապրիլի 30-ի համարում տպագրված է Հայ Դատի հանձնախմբի հաղորդագրությունը, ըստ որի ապրիլի 24-ին ԱՄՆ-ում հիսուն հինգ կոնգրեսմեններ մասնակցել են Հայոց ցեղասպանության 81-ամյակի ոգեկոչման ձեռնարկումներին:

Կոնգրեսի հայկական խմբավորման համանախագահ Ֆրենկ Փալոնը Վաշինգտոնում բացելով ոգեկոչման հայտագիրը, հայտարարել է. «Ապրիլի 24-ը կնշե 81-րդ տարեկիցը Հայկական ցեղասպանության շղթայագերծումին, որ 20-րդ դարում և հավանաբար մարդկային պատմության ամենեն ահարկու դեպքերն են», և պահանջել է, որ ԱՄՆ-ն «պետք է շարունակե Թուրքիան համոզե, որ ամեն տարի հարյուրավոր միլիոն դուարի ամերիկյան օժանդակությամբ կստանա, որպեսզի պաշտոնապես ճանչնա ճշմարտությունը, պետք է մահ պնդենք, որ Թուրքիա վերացներ Հայաստանի դեմ եակաօրինական շրջափակումը և ընդունի Հայաստանի կառավարության առաջարկը՝ հարաբերությունները բնականոնացնելու գծով»:

Կոնգրեսականների ելույթներից բերված են առանձին քաղվածքներ:

«Ցեղասպանության հարցը քաղաքական հրատապ հարց պիտի մնա, մինչև որ թրքական կառավարությունը ետ կանգնի իր ամբարի ուրացումեն և հաշվի առնե հայերու և թուրքերու պատմության այս ռդրերգական էջը»- այսպիսին է կոնգրեսականների հավաքական կարծիքը:

Թերթի մույն համարում «ոգեկոչման ձեռնարկներ-գաղութ գաղութ» խորագրի տակ հաղորդվում է այն մասին, որ Հունաստանի խորհրդարանը ճանաչել է Հայկական ցեղասպանությունը և ապրիլի 24-ը հռչակել է նահատակների հիշատակի օր:

Հայոց ցեղասպանության հարցի բննարկմանը մասնակցել են երկրի խորհրդարանի բոլոր կուսակցությունների

ներկայացուցիչները: Նիստում բացման խոսքով հանդես է եկել խորհրդարանի նախագահ Ապոստոլ Կազլամանին: Յեղասպանության ոգեկոչման միջոցառումները լուսաբանվել են նաև հեռուստատեսությամբ և ռադիոյով: «Թուրքիո մեջ,- ասված է այդ հաղորդումներից մեկում,- նույն կառույցները կտիրեն, և այդ կառույցներու ընդմեջեն անցնող մեկ դարու ընթացքին թուրք պետության նույն քաղաքականությունը կիրականացվի մեր օրերում ալ, անշուշտ տարբեր մթնոլորտին մեջ, բայց միևնույն հոգեբանությամբ, մղումներով ու միջավայրով: «Հիվանդ մարդը» (նկատի ունի Թուրքիան) հոգնած է սակայն, այդ պատճառով ալ հոգեվարքի մեջ գտնվող հիվանդի պես ինքզինք կգրադեցնե իր և իր շրջանային բազմատեսակ խնդիրներով»:

Նույն այդ լրատվության մեջ ասված է, որ ապրիլի 24-ին Նեա Ջմյուռնիի հայկական հուշարձանի առջև տեղի է ունեցել հոգեհանգստյան արարողություն, որտեղ ելույթ են ունեցել Եվա Պերուպեյանը և Խաչիկ Ասատրյանը, Հունաստանում Հայաստանի արտակարգ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը, և Նեա Ջմյուռնիի քաղաքապետ Ե. Սիոթրուխուր: Հունաստանում թուրքական դեսպանատան շենքի մոտ տեղի է ունեցել բողոքի ցույց:

Նույն օրը Աթենքի «Արիքոն» սրահում կայացած քաղաքական հավաքում ելույթ են ունեցել Հունաստանի խորհրդարանի նախագահ Ապոստոլ Կազլամանին, Արման Կիրակոսյանը. «Փանաիո» քաղաքական գիտությունների համալսարանի միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Դեմիտրի Գոմսթասը: Վերջինս առանձնապես շեշտել է թուրքերի համառ ջանքերը Հայոց ցեղասպանության ժխտելու քաղաքականությունը շարունակելու ճանապարհին, նշել այս ուղղությամբ թուրք կառավարության կատարած քայլերը վերջին մի քանի տարիների ընթացքում: «Իսկապես ցավալի է հաստատելը,- ասել է պրոֆեսորը,- որ Հայոց ցեղասպանությունեն 81 երկար տարիներ հետո Թուրքիո պետությունը անպատժելի մնալով՝ կշարունակե սխտեմատիկ կերպով բռնաբարել մարդկային իրավունքները և միջազգային իրավանց ու բարոյական ընդունված հասարակաց կանոնները: Այսպես ամեն օր կդիմի բռնաբարքներու, որուն հավատարիմ կմնա միշտ»:

Թերթի հաջորդ համարներում (մայիս, հունիս) լայնորեն լուսարանված են Մեծ եղեռնի ոգեկոչումի միջոցառումները Ամերիկայի, Կոնադայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրալիայի, Արգենտինայի, Մերձավոր Արևելքի ամենատարբեր քաղաքներում:

«Ասպարեզի» մայիսի 3-ի համարում տրված է ընդարձակ լրատվություն պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի Ավստրալիա կատարած ուղևորության, նրա կատարած դասախոսությունների, պետական այրերի հետ ունեցած հանդիպումների մասին: Ռ. Հովհաննիսյանը իբր տիկնոջ հետ Ավստրալիա է մեկնել հայոց ցեղասպանության 81-րդ տարելիցի օրերին տեղի համալսարանի Բաղդատական ցեղասպանության կենտրոնի հրավերով: Նա իր առաջին դասախոսությունը կարդացել է ապրիլի 24-ին Ուիլուպիի քաղաքապետարանի սրահում, ուր ներկա են եղել ավելի քան հազար մարդ: Հայ գիտնականը հիմնականում շեշտը դրել է եղեռնի ուրացման թուրքական արդի քաղաքականության վրա: Ռ. Հովհաննիսյանը բացի պետական պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումներից ելույթներ է ունեցել նաև հեռուստատեսությամբ: Թերթը տեղեկացնում է, որ պրոֆեսոր Թուրզի գլխավորությամբ գործող Բաղդատական ցեղասպանության կենտրոնի «International Notwerc on Holocoats and Genocide» գիտական պարբերականը տպագրել է Ռոբերտ Մեկսոնի, Վահագն Տատրյանի, Ռուբինա Փիլոմյանի, Մանուկ Տերիքճյանի հրապարակումները հայոց ցեղասպանության հետ առնչված զանազան հարցերի վերաբերյալ: Թերթի մույն համարը տեղեկացնում է, որ Ավստրալիայի մայրաքաղաք Սիդնեյում տեղի է ունեցել հայոց ցեղասպանության 81-ամյակի ոգեկոչման արարողություն, որտեղ ընթերցվել է Ռիելս մահանգի վարչապետ Պոպ Զարիի հետևյալ խոսքը.

«Կցավիմ, որ այսօր անկարող եմ ձեզի հետ ըլլալ՝ ոգեկոչելու հայկական ցեղասպանությունը և ձեզի հետ ցասումս հայտնելու ոչ միայն հայերու, այլ ցեղասպանության ենթարկված այլ ժողովուրդներու նկատմամբ: ...Աշխարհը երբեք պետք չէ մոռանա Հայկական ցեղասպանությունը, որը ամբողջ ազգի մը սպանդն էր: Դեպքը ուրանալու միջոց չունի: Արդեն Եվրախորհուրդը

1987-ին քվեարկեց հայկական ցեղասպանության վավերականությունը ընդունող բանաձև մը»:

Թերթի լուրերից տեղեկանում ենք, որ Թեհրանում բողոքի հանրահավաքում հնչել է «Արևմտյան Հայաստանը պետք է ազատագրել» պատգամ-կարգախոսը, ընդունվել է 11 կետից կազմված մի բանաձև, որն ընթերցվել է պարսկերեն: Թուրքական դեսպանատան առաջ հրկիզվել է թուրքական դրոշը և այլն:

Ոգեկոչման արարողություններին անդրադարձել են նաև պարսկական և Իրանում լույս տեսնող ամգլերեն թերթերը, ուղիղտ և հեռուստատեսությունը:

Թերթի 22 և 23-ի համարներում տպագրված է Վարուժան Թեմպեյանի «Վերականգնենք հարատև կովի բարոյական շենքը» պատմական ակնարկը, որը վերաբերում է Հայ Դատին ու պահանջատիրությանը դարերի հեռուներից մինչև այսօր: Մայիսի 24-ի համարում ներկայացված է Արմեն Տոնոյանի «Հայաստանի հողերը, Հայաստանի հողային պահանջը» հրապարակախոսությունը, ուր հիմնականում շոշափված են Հայաստանի ճակատագրի հետ առնչված բոլոր պայմանագրերը՝ սկսած 1813 թ. Գյուլիստանի պայմանագրից մինչև Լոզանի դաշնագիրը:

«ՆՈՐ ԿՅՄԱԶ» շաբաթաթերթը (1996թ. ապրիլի 14-ը) հաղորդում է, որ Լոս Անջելեսում ստեղծվելու է Հայոց ցեղասպանության թանգարան: «Այս հսկա ծրագիրը արդեն իր շուրջը համախմբում է վարչական խորհրդի երևելի պատվո անդամներ, որոնց շարքին Կալիֆորնիո կառավարիչ Փիթր Ուիլսոնը, որն իր ելույթում ասել է. «... իր մանրամասնություններում մեջ համայն մարդկությունը պետք է իմանա Հայկական ցեղասպանության դրդապատճառները: Այս թանգարանի կառուցումը մեծապես պիտի սատարե այլ նպատակի իրականացմանը»: Ուիլսոնի կարծիքը պաշտպանել է և ԱՄՆ-ի ժերակուտական Պոլ Մայմոնը. «Կարևոր է, որ դարուս առաջին ցեղասպանությունը համայն մարդկությանը ծանոթացվի: Հայկական ցեղասպանության ոգեկոչման թանգարանը կընամեծապես ստորաբերել դասախարակչական այդ աշխատանքներին»- ասել է Մայմոնը:

Թանգարանի ստեղծման նախաձեռնողներից է դոկտոր Կարապետ Տեր-Նոդիյանը, մույն ինքը՝ տնօրենը: Թանգարանի շենքը նախագծել է ճարտարապետ Սարգիս Պալմանուկյանը, Տեր Զորի հուշակոթողի հեղինակը: Թանգարանը ունենալու է Ուելսկոմի, տեսադասական, համաժողովների, ցուցադրական, ԱՄՆ-Հայաստան բարեկամության սրահներ, գրադարան, գրատուն, եղեմնի կոթող իր շրջակա պուրակով, ուր պիտի տեղադրվեն խաչքարեր, ցայտադրյալներ և այլն: Թանգարանի հովանավորներն են Կալիֆորնիայի երեք տասնյակ պաշտոնյա բարերարներ, որոնցից երեքը հայեր են:

«Ամերիկայի Հայկական ցեղասպանության թանգարանը պետության կողմից վավերացված ոչ հասութաբեր կազմակերպություն մըն է, որ պիտի ղեկավարվի խնամակալ Մարմնի մը կողմէ» - ծանուցում է թերթը: Շաբաթաթերթի մարտի 28-ի համարում Վահրամ Հաճյանը ներկայացրել է Հայրենիքում լույս տեսնող Հայրենակցական միությունների խորհրդի «Բնօրրան» նոր հանդեսը, որի մեջ զետեղված հոդվածները ուղղակիորեն առնչված են ցեղասպանության հետ:

Շաբաթաթերթի ապրիլի 18-ի համարից տեղեկանում ենք, որ 1996-ի մարտի 28-ին տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության պատմության նշանավոր մասնագետ Վահագն Տատրյանի հանդիպում-ասուլիսը Լոս Անջելեսի հայկական թերթերի խմբագիրների և խմբագրատների աշխատակիցների հետ, պատասխանել նրանց հարցումներին:

Մի երկուսը առավել ուշագրավ հարցերից.

Հարց. - Թուրք պետությունը Օսմանյան կայսրության վավերագիրները բաց թողած է գիտական ուսումնասիրություններու համար: Պիտի օգտվի՞ք անոնցմէ:

Պատասխան. - Թուրքիա երբեք բաց պիտի չթողու այն վավերագիրները, որոնք կրնան Օսմանյան կայսրությունը ամբաստանյալի աթոռին մատնեցնել:

Հարց. - Ժամանակակից հրեա պատմագրությունը և մենք:

Պատասխան. - Զիչ հրեա պատմաբաններ կան, որոնք կուզեն ուսումնասիրել հայկական ցեղասպանությունը: Հավանաբար չեն ուզեր որ հրեական ցեղասպանությունը զուգահեռ ունենա:

Հարց. - Մտածողներ կա՞ն, որոնք կկարծեն թե Հայկական
ցեղասպանությունը սիոնիստներու դրդումով քաջալերանք գտավ:

Պատասխան. - Կան փաստեր, թե սիոնիստական ղեկավարու-
թյունը անմապստ կեցվածք ունեցավ հայոց ազատագրական
պայքարի հանդեպ... Սակայն չի կարելի ասել, թե հրեաները
քաջալերեցին Հայկական ցեղասպանությունը:

Հարց. - Ադրբեջանում կատարված ցեղասպանության մասին...

Պատասխան. - Սուվգայիթը և Բաքվի դեպքերը ցեղասպանության
սահմաններում մեջ չեն մտնել: Կոտորած կարելի է համարել...

«Նոր կյանք» շաբաթաթերթի ապրիլի 25-ի համարը
տպագրել է մեծ եղեռնին վերաբերող զանազան նյութեր, մահատակ
հասարակական գործիչների ու գրողների գծանկարներ, եղեռնական
բանաստեղծություններ, հուշեր և այլն:

«Մասիս» շաբաթաթերթը (Լոս Անջելես) նույնպես
անդրադարձել է Վահագն Տատրյանի վերաբիշյալ հանդիպմանը:
Վերջինս նշել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը դանդաղ,
բայց հաստատ առաջընթաց է արձանագրում, հայոց պսևհանջա-
տիրությունը նոր լիցք է ստանում, և թուրք պատմաբանների
պատմությունը խեղաթյուրելու փորձերը նվազ հաջողություն ունեն,
և որ թուրքերը ստիպված կլինեն վերանայել իրենց տեսակետները:

«Նշանակալից երևույթ է,- ասել է Տատրյանը, որ
Թուրքիայում թուրքերեն լույս են տեսել «Մուսա լեռան-քառասուն
օրը» վեպը, իր «Հայոց ցեղասպանության իրավական ուսումնա-
սիրությունը» գիրքը և զանազան հոդվածներ: Նշանակում է Հայոց
ցեղասպանության միջազգային ճանաչումը ճանապարհ է
հարթում»:

Շաբաթաթերթի 1996 թ. ապրիլի 6-ի համարը շոշափում է
քիչ ուսումնասիրված մի հարց՝ սիոնիզմի դերը Հայոց
ցեղասպանության գործում: «Ծիշտ է, որ իթթիհադական կարգ մը
գլխավոր ղեկավարներ հրեաներ էին... ու բարձր անդամներ
մասոնական օթյակներու, բայց նկատի առած այս նյութերու շուրջ
բացահայտ սկզբնաղբյուրներու բացակայությունը, կարելի չէ
հստակ եզրակացություններու հանգել: Հայկական ցեղասպա-
նության գլխավոր կազմակերպիչը կարելի է համարել դակտոր
Նազըմը, որը սելանիկցի հրեա մըն էր, սակայն ավելի տվյալներ

կան եզրակացնելու, որ ան գործած էր որպես մոլեռանդ թուրք և ոչ թե որպես հրեա»:

«Մասիսի» 27 համարում տպագրված է Նորայր Սարուխանյանի «Հայկական հարցում սխեմիզմի իսկական դեմքը» հոդվածը: Սարուխանյանը որոշակի կարծիք է հայտնում, ըստ որի սխեմիստները Առաջին պատերազմի նախօրեին և հետո գործունյա մասնակցություն են ունեցել Թուրքիայի հին ու նոր կառավարողների (Աբդուլ Համիդ, երիտթուրքեր, Զեմալ) «Հայաստան առանց հայերի» հրեշավոր ծրագրի մշակման և ապա գործարկման մեջ: Սխեմիստական գաղափարախոսների հակահայկական գործունեությունը չդադարեց Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո էլ: Ընդհակառակը, կլանված «Համաշխարհային հեղափոխության հաղթանակի» տխրառաչակ տեսությամբ քաղաքական հայտնի գործիչներ Տրոցկին, Իոֆֆեն, Սոկոլնիկովը, Ռադեկը և այլք դաշնակցելով պանթուրքիզմի գաղափարախոսների հետ բաժան-բաժան արին Հայաստանը, տարածքները հանձնելով Թուրքիային ու Ադրբեջանին: Հայաստանը, ըստ Սարուխանյանի, ծնունդով հրեա այս գործիչները դիտում էին իբրև համշխարհային իմպերիալիզմի գործակից, որը ընկած է համաշխարհային հեղափոխության ճանապարհին, հետևաբար այն պետք է չեզոքացվի:

Շարաքաթերթը հունիսի 8-ի համարում տպագրել է Հարութ Տեր-Դավթյանի «Հարցադրումներ եղեռնի պատասխանատվության շուրջ» պատմական ակնարկը, որը ամբողջովին նվիրված է սխեմիզմի գործունեին: «Մասիսի» ապրիլի 27-ի համարում տպագրված է Ռ.Օ. Սահակյանի «Այսպես բռնազրավվեց Արևմտյան Հայաստանը» պատմական ակնարկը, որ խոսվում է հայերի ազատագրական կռիվների մասին:

Նույն համարում գետեղված է Մանվել Աղամյանի «Հայրենիքը մեր պաշտպանության կենտրոնաձիգ ուժն է» հոդվածը: Հեղինակը գրում է, որ հակառակ պաշտոնական մտայնության, 1965-ին Հայաստանի պետությունն ու ժողովուրդը ճեղքեցին լուծարման պատը (Միժեռակարեւոյի կոթողը, Սարգսրապատի համալիրը, բազմաթիվ գիտական աշխատությունների հրատարակություններ): Հայաստանի անկախությունից հետո

հայոց պահանջատիրությունը թևակոխել է նոր փուլ,- ասում է հեղինակը և պետք է համատեղել հայրենիքի ու սփյուռքի ուժերը՝ ցանկալի նպատակին հասնելու համար: Հեղինակը անհիմն է համարում այն խոսակցությունները, թե իբր ներկայիս իշխանությունները հրաժարվում են պահանջատիրությունից, հետամուտ չեն Հայ Դատին: «Այսպես մտածողները,- գրում է հեղինակը,- ելնում են իրենց կուսակցական մեղ շահերից և ոչ ժողովրդի և կոչ են անում վեր կանգնել կուսակցական շահերից: Մեր համախմբվիլը պետության շուրջ, գոնե այս հանգրվանին խիստ անհրաժեշտ է»:

Մայիսի 4-ի համարում տպագրված են լուրեր զանազան բաղադրներից, ուր եղել են Ոգեկոչման հանդիսություններ, ինչպես և Դարեգին Ա. կաթողիկոսի ապրիլի 24-ի առթիվ ժողովրդին ուղղված պատգամը:

Շաբաթաթերթը լայնորեն անդրադարձել է Փարիզում կայացած ապրիլի 24-ի ոգեկոչումներին: Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ֆրանսուա Ռաշթրոտան իր ելույթում հույս է հայտնել, որ Ֆրանսիայի խորհրդարանը մոտ ապագայում պաշտոնապես կճանաչի Հայկական ցեղասպանությունը: Նույն համարում տպագրված են ԱՄՆ-ի նախագահ Բիլսոնի և նախագահության թեկնածու Բ. Դոուլի ուղերձները ապրիլի 24-ի առիթով:

Օրաթերթը 1996 թ. ապրիլի 23-ի իր անգլերեն տարբերակում հրապարակել է օտարերկրացի և հայ գիտնականների, գրողների հայտարարությունը, որը վերնագրված է այսպես. «ՄԵՆԶ ԲՈՂՈՒԹՈՒՄ ԵՆԶ ԹՈՒՐԶԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ԺԵՏՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԼՎԱՐՄԱՆ ԴԵՄ»:

Հայտարարության մեջ ասվում է, որ հայերի ջարդերն ու կոտորածները երիտթուրքական կառավարության կողմից իրագործվել են կանխամտածված, նախօրոք մշակված ծրագրով և ամենաբարբարոսական եղանակներով, բացառությամբ Պոլսի և Ջոնտոնիայի բնակիչների մի փոքր մասից, լիովին ոչնչացվել, իր

պապենական հռչերից արմատահան է արվել ամբողջ արևմտահայությունը:

Հայերի ցեղասպանության իրողությունը հաստատում են բուրբակահ գինվորական ատյանի դատական արձանագրությունները, աշխարհի տարբեր երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Ավստրիա և այլն) արխիվներում եղած փաստաթղթերն ու լուսանկարները, միառններների և դիվանագետների զեկուցագրերը, վերապրողների վկայությունները, երիտթուրքերի ղեկավարների զաղտնի հեռագրերը և վերջապես՝ ցեղասպանության 80-ամյա պատմագրությունը:

Չնայած ույս ամենին, բուրբակահ կառավարությունը համառոտ են շարունակում է ժխտել հայոց ցեղասպանությունը, պնդելով, թե անպաշտպան և տեղահանված հայ բնակչության ոչնչացումը քաղաքացիական կռիվների և պատերազմական իրադրության հետևանք է:

Հայտարարության մեջ վկայակոչվում է Ռոջեր Սմիթի, Էրիկ Մարկագենի և Ռոբերտ Լիֆտունի՝ «Հոլոքոստի և զենոցիդ ուսումնասիրություն» ամսագրում տպագրված (1995 թ.) «Բարոյականություն և Հայոց ցեղասպանության ժխտումը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակները հայերի ցեղասպանության ժխտումը համարում են ճշմարտության կեղծում, քանի որ ժխտելով հայերի ցեղասպանությունը, պաշտոնական Թուրքիան փորձում է արդարացնել ոճրագործությունը և նրա հեղինակներին, նենգափոխել պատմությունը, մի բան, որը պայմաններ է ստեղծում հերքելու նաև կատարված և կատարվող ցեղասպանությունները:

Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է, որ սկսած սառը պատերազմի ժամանակներից, Թուրքիան պարբերաբար Միացյալ Նահանգների կառավարությանը հարկադրել է չճանաչել հայերի ցեղասպանությունը և հերքել այն, հակառակ պարագային սպառնալով փակել Թուրքիայում ամերիկյան ռազմական բազաները: Թուրքիայի ճնշմամբ խափանվեց Հայոց ցեղասպանության ճանաչման հիշատակի օր սահմանելու կոմզոնսի բանաձևը, փորձ արվեց ԱՄՆ-ի պետական կրթական ծրագրերից հանել ցեղասպանությանը վերաբերող

ուսումնական նյութերը, ձախողել Թել-Ավիվում գումարված գիտաժողովում հայկական ցեղասպանության հարցի բննարկումը:

Ամեն տարի. պոստմոթյունը նենգափռիտու և ցեղասպանությունը հերքող քարոզչության համար Թուրքիան ծախսում է տասնյակ միլիոնավոր դոլար: Նյութապես խրախուսվում են հասարակական հարաբերությունների հարցերով զբաղվող այն մասնագետները, ովքեր Թուրքիայի պատվերով կեղծում և պաշտպանում են թուրքական տեսակետը: Վերջերս հայտնի է դարձել, որ թուրք կառավարությունը 1,5 միլիոն դոլարով պարգևատրել է Փրինսեթընի համալսարանի ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Հեֆ Լոուրին, որի հետազոտություններում խեղաթյուրվելու կեղծվել է ճշմարտությունը՝ հայոց ցեղասպանության մասին:

Հայտարարությունը ստորագրել են Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, բանաստեղծ Սենուս Հիմեյը, Բոստոնի համալսարանի պրոֆեսոր, գրող Դերեկ Վոլկոթը, Նյու-Յորքի համալսարանի իրավաբանական քոլեջի դասախոս, պրոֆեսոր Ռոբերտ Լիֆտոնը, ԱՄՆ-ի հարավարևմտյան նահանգների սոցիոլոգիայի համալսարանի դասախոս, պրոֆեսոր Էրիկ Մարկաուզեն, Վիրջինիա նահանգի Վիյամ և Մարի քոլեջի դասախոս, պրոֆեսոր Ռոջեյ Սմիթը, Երուսաղեմի ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Իսրայել Զարնին, գրող Մայքլ Ադենը, սփյուռքահայ հանրաճանաչ սլավոմաբաններ Ռիչարդ Հովհաննիսյանը, Վահագն Տատրյանը և այլք. թվով հարյուր մարդ:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ» ամսաթերթը (ԱՄՆ) հուլիսյան համարում տպագրել է Մ. Մարտիրոսյանի «Հայկական բարենորոգումների իրագործման ձախողումը Օսմանյան կայսրությունում 1914 թվականին» ծավալուն հոդվածը: Հոդվածում պարզաբանվում են 1914 թ. հունվարի 26-ի Հայկական բարենորոգումների մասին ուս-օսմանյան համաձայնագրի չիրագործվելու պատճառները: Մինչև այսօր պատմության թուրք կեղծարարները Համաձայնագրի չիրականացման պատճառը համարում են Առաջին համաշխարհային պատերազմը, որն իբր հնարավորություն չտվեց իրականացնելու հայկական բարենորոգումները: Այսպիսի պատճառաբանությունը, գրում է

հեղինակը - նպատակ ունի երկաթուղիներին ոչ միայն ազատել սլաշուսխանատվությունից, այլև հերքել եղեմնի նախամտածված, նախօրոք ծրագրված լինելու միաստը: Մինչև 1914 թ. երկաթուղիների քաղաքական բայլերի մանրամասն ուսումնասիրությունը հաստատում է, որ հայերի ցեղասպանությունը նախապատրաստված և ծրագրավորված էր դեռ պատերազմից առաջ...

Նոր պատմաշրջանում հազիվ թի գտնվի այնպիսի ուխտադրուժ կառավարություն, որը մի կողմից պարտավորվեր բարենորոգումներ անցկացնել, իսկ մյուս կողմից, ընդամենը մեկ տարի անց իրագործել համաշխարհային պատմության մեծագույն ոճրագործություններից մեկը՝ Հայկական ցեղասպանությունը»: Օգտագործելով վավերական փաստերը, արխիվային նյութերը, հեղինակը նախ խոսում է այդ Համաձայնագրին հաջորդող հայերի ոգևորության մասին, հիշատակում է Ջավեն պատրիարքի ոգևորիչ ճառը 1914 թ. մայիսի 9-ին ազգային ժողովում, արևելահայ բուրժուազիայի արևմտահայությանը օգնելու պատրաստակամությունը՝ բարոյական ու նյութական իմաստով և այլն: Ռուսական դիվանագիտությունը իր հերթին խրախուսում էր հայերի ձեռնարկումները:

«Մինչ հայկական շրջանները և ռուսական դիվանագիտությունը զբաղված էին Արևմտյան Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի ծրագրեր կազմելով, երկաթուղիական կառավարությունը աստիճանաբար բոլոր միջոցները գործադրում էր հայկական բարենորոգումների կիրառումը ձախողելու համար» - գրում է հեղինակը:

Հեղինակը վավերաթղթերով հիշատակում ու թվագրում է թուրք կառավարության նենգամիտ ձեռնարկումները՝ հայկական գավառներում թափուր պաշտոնատեղերի հապճեպ լրացումը թուրք պաշտոնյաներով, հայ պաշտոնյաների հեռացումը, հողային վիճելի հարցերի շտապ լուծումը դատարանի միջոցով՝ հօգուտ թուրքերի, ռստիկանական կազմի մահմեդականացումը, հայկական տարածքները մահմեդականներով բնակեցնելը և այլն: «Ռուս-թուրքական Համաձայնագրին վիճակվեց մույն բախտը, ինչին արժանացավ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի

վեհաժողովի 61-րդ հոդվածները»,- այս եզրակացությամբ էլ ավարտվում է Մ. Մարտիրոսյանի ուսումնասիրությունը:

«ՄԱՍԻՍ» շաբաթաթերթը (ՄԴԿ կուսակցության պաշտոնական օրգան, ԱՄՆ) 1996-ի մայիսի 4-ի համարում տպագրել է Հայոց ցեղասպանությանը վերաբերող զանազան նյութեր՝ հոդվածներ, պատգամներ, ուղերձներ:

Ուշադրության արժանի է սենատոր Բ. Դոուլի ուղերձը, որտեղ ասվում է.

«Ես տարիներ շարունակ հանդես եկած եմ այդի դարաշրջանի առաջին ցեղասպանության ճանաչման օգտին: Մինչև Հայոց ցեղասպանության փաստը համընդհանուր ճանաչում կստանա, ես զորակից եմ անցյալի ճշմարիտ պատկերը վերականգնելու ձեր ջանքերին: Այսօր, երբ մենք կանդաղադառնանք հայ ժողովրդին բաժին հասած փորձության, իմ ամուր աջակցությունը կհայտնեմ Հայաստանի անկախության և Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշմանը»: